ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԱՅԿՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ,
ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ, ԱՐԱՔՍ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ,
ՏԱՐՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 000
ԳՄԴ 000
Հ 000

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: 7–րդ դասարան: Մեթոդական ուղեցույց /
Հ 000 Կ. Հարությունյան, Հ. Բարսեղյան, Ն. Գալստյան, Ա. Մանուչարյան,
Տ. Սիմոնյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 96 էջ:

ՀՏԴ 000
ԳՄԴ 000

ISBN 978–9939–99–000–0

© Հեղինակներ, 2023
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2023

1. Առարկայի նպատակը

«Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել ժողովրդավարության հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մասնակցող և սոցիալապես պատասխանատու քաղաքացի:

«Հասարակագիտություն» առարկան սովորողին հասարակական գործընթացներն ուսումնասիրելու, դրանց մասին քննադատական մոտեցում ձևավորելու և սեփական դիրքորոշում ունենալու հնարավորություն է տալիս: Սովորողը պետք է կարողանա գիտականորեն ընկալել մարդու և հասարակության հիմնահարցերը, քաղաքական կարգերն ու գաղափարները, կայուն զարգացման հակասությունները, հետազոտել և մեկնաբանել դրանք, տիրապետել ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների, իրազեկ լինել տեղական, ազգային և համաշխարհային հիմնախնդիրներին՝ հենվելով ազգային ու համամարդկային արժեքների վրա:

«Հասարակագիտություն» առարկայի վերջնարդյունքները

Միջին դպրոց

1. Բնութագրի *մարդ, բնություն, մտածողություն* հասկացությունները:
2. Գիտակցի կարիքների ու ցանկությունների անսահմանափակությունն ու ռեսուրսների սահմանափակությունը:
3. Հասկանա ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու անհրաժեշտությունն ու ձևերը:
4. Սահմանի առողջ և անվտանգ կենսակերպի կանոններն ու բաղադրիչները:
5. Բացատրի և հիմնավորի անձի առանձնահատկությունները և հասարակական կյանքի օրինաչափությունները:
6. Մեկնաբանի և վերլուծի սեփական հույզերը, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկություններն ու հակումները:
7. Գիտակցի հույզերի, մտածողության և վարքագծի դերը աշխարհաճանաչողության գործում:
8. Թվարկի մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, բացատրի, թե ինչ դեր ունեն անհատը և պետությունը դրանք հարգելու և պաշտպանելու գործում:
9. Բացատրի *ազատություն, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, քաղաքացիություն, իրավունքներ և պարտականություններ* հասկացությունները:
10. Ներկայացնի և քննարկի համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները:
11. Ճանաչի մեդիայի ու խոսքի ազատության դերը, որպես ակտիվ քաղաքացի կարողանա օգտագործել մեդիա գործիքները ժողովրդավարական և մարդու իրավունքների պաշտպանության գործընթացներում:
12. Քննադատորեն վերլուծի և ստուգի տեղեկությունները, տարբերի հավաստի ու կեղծ լուրերը:

2. Առարկայի դասընթացի ընդհանուր բնութագիրը

2.1. «Հասարակագիտություն» առարկայի արդիականությունը

«Հասարակագիտություն» առարկայի արդիականությունը պայմանավորված է ուսուցման երեք բաղադրիչներով՝ իմացական, սոցիալական և անձնային:

- **Իմացական (կոգնիտիվ) բաղադրիչ**

Ժամանակակից աշխարհում չափազանց կարևոր է հասարակական կյանքի օրինաչափությունների մասին գիտելիքներ ունենալը: Այդ գիտելիքների միջոցով կարող ենք հասկանալ ու բացատրել մեզ շրջապատող աշխարհը, կառուցել արտաքին աշխարհի մասին հիմնավոր պատկերացում: Հասարակական գործընթացների բազմազանությունը, տարբեր երևույթների մասին առկա տարակարծությունները կարևոր նախապայման են սովորողների շրջանում քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնելու տեսանկյունից: Ժամանակակից աշխարհում էապես մեծացել են մարդկանց միջև աշխարհայացքային տարբերությունները, ինչի հետևանքով հաճախ փորձում են մարդկանց ապակողմնորոշել, մանիպուլացնել, զրկել ինքնուրույն մտածելու հնարավորությունից: Այս խնդիրներին դիմակայելու համար կարևոր է, որ սովորողներն ունենան քննադատական մտածողություն, ինչը հասարակական երևույթները տարբեր կողմերից դիտարկելու, դրանց դրական և բացասական հայեցակետերի մասին կշռադատելու և հիմնավորված որոշումներ կայացնելու հնարավորություն է տալիս: Հասարակական գործընթացների բազմազանությունը ոչ ստանդարտ մոտեցումներ դրսևորելու և դրանով իսկ սովորողների ստեղծագործական մտածողությունը զարգացնելու լավ հնարավորություն է ստեղծում:

Առարկայի դասավանդման շրջանակում առաջնային է համարվում քաղաքացիական, իրավական, տնտեսական, մշակութային, մեդիա գրագիտության ձևավորումը, որոնք համարվում են բարեկեցիկ հասարակության հենասյուները: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ ձեռք բերելու մարդու մտածողության մասին և դրա շնորհիվ յուրացրած հմտությունները կիրառելու որոշակի իրավիճակներում:

- **Սոցիալական բաղադրիչ**

Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ ժամանակակից աշխարհում կարևորվում են սոցիալական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը, համագործակցությունը, դիմացինին հասկանալու կարողությունը, կոնֆլիկտներ լուծելու հմտությունը: Կարևոր են նաև այնպիսի որակների զարգացումը, ինչպիսիք են սոցիալական համերաշխությունը, սոցիալական պատասխանատվությունը, սոցիալական ձեռներեցությունը և մասնակցությունը:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ ձեռք բերելու սոցիալական հմտությունների մասին և դրանք կիրառելու հասարակական տարբեր երևույթներ բացատրելու գործընթացում:

- **Անձնային զարգացման բաղադրիչ**

Հասարակությունների զարգացման մակարդակը մեծապես կախված է այն հանգամանքից, թե ինչպիսի անձնային որակներ ունեն տվյալ հասարակության անդամները, որքանով են առաջնորդվում ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պահանջով: Այս առումով կարևոր են անձի հուզական հասունությունը և ինքնաճանաչողության, ինքնագնահատման բարձր մակարդակը: Անձի ձևավորման գործում էական նշանակություն ունեն այն արժեքներ

կրելը, ինչպիսիք են՝ ազատությունը, արդարությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, արժանապատվությունը: Հենց այդ արժեքների վրա հիմնվող անձը կարող է դրսևորել պատասխանատու վարքագիծ՝ գիտակցելով իր քայլերի կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները: Արժեքների վրա հիմնվող անձնային զարգացումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման հիմնական նպատակներից մեկն է:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը մեծ դեր ունի դպրոցի՝ քաղաքացիական կրթության առաքելության իրականացման գործում:

3. Առարկայի առանցքային գաղափարները, ծրագրի առանձնահատկությունները

Առարկայի **առանցքային գաղափարներն են**.

- անհատ-հասարակություն փոխազդեցությունը,
- հասարակության էվոլյուցիան,
- հիմնարար արժեքների նշանակությունը,
- մարդկության գլոբալ հիմնախնդիրները:

Հասարակագիտություն առարկայի առանձնահատկությունն այն է, որ բաղկացած է *սոցիոլոգիա, հոգեբանություն, իրավագիտություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն* գիտակարգերից, ինչը հնարավորություն է տալիս հասարակական երևույթներն ընկալելու բազմակողմանիորեն և ինտեգրված եղանակով: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ հասարակագիտական հարցերի մասին չկան միանշանակ տեսակետներ, վերջնական լուծումներ, ինչը սովորողների մեջ խնդիրները համակողմանի դիտարկելու, այլակարծությունը հանդուրժելու հնարավորություններ է ընձեռում:

Յուրաքանչյուր դասարանի համար ընտրված է մեկ գլխավոր թեմա, որի շուրջ կառուցվում է բովանդակությունը: Այդ թեմաներն են՝

- ✓ 7-րդ դասարան՝ «Մարդ»,
- ✓ 8-րդ դասարան՝ «Հասարակության հիմնասյուներ. արժեքներ և իրավունքներ»,
- ✓ 9-րդ դասարան՝ «Պետություն»,
- ✓ 10-րդ դասարան՝ «Հասարակագիտական մտքի հիմունքներ»,
- ✓ 11-րդ դասարան՝ «Պետական համակարգի իրավական, տնտեսական և քաղաքական բաղկացուցիչներ»,
- ✓ 12-րդ դասարան՝ «Ինքնաճանաչողություն»:

Առարկայի դասավանդումը հիմնված է 3 մոտեցման վրա.

1. **Հասկացությունների և սկզբունքների ուսուցում,** ինչը հնարավորություն կտա իմանալու առարկայի բովանդակությունը:
2. **Հետազոտական ուսուցում,** ինչը հնարավորություն կտա հասկանալու, որ բազմաթիվ խնդիրներ չունեն միանշանակ լուծումներ և անխուսափելի են մշտական որոնումները:
3. **Նախագծային ուսուցում,** ինչը նպատակ ունի զարգացնել թիմային աշխատանքի հմտություններ, առաջարկել խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ:

«Հասարակագիտություն» առարկայի առանցքային գաղափարների ուսուցումը հիմնված է ինտեգրված մոտեցման վրա, ինչը հնարավորություն է տալու թեմաները դիտարկելու փոխկապակցվածության մեջ.

- **Պարույրի մոտեցումը** հնարավորություն է տալու առանցքային գաղափարներին անդրադառնալու շարունակաբար և բարդության տարբեր մակարդակներով:
- **Պատմական մոտեցումը** ենթադրում է ներկայացնել խնդրի մասին բոլոր կարևոր տեսությունների էվոլյուցիան, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան զարգացնել մտածողության, որոշում կայացնելու և դիրքորոշում ունենալու հմտություններ:

4. **Սովորողների հետ աշխատանքի հիմնական մեթոդների և տեխնոլոգիաների, գնահատման առանձնահատկությունների, եղանակների և ձևերի համառոտ նկարագրությունը**

Ուսումնական գործընթացն իրականացվելու է խառը ուսուցման ձևաչափով: Կիրառվելու են դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները: Ուսուցումն իրականացվելու է համադասարանական, անհատական և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսումնական գործընթացում, ելնելով թեմայի բովանդակությունից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները.

- ուսումնական նյութի բացատրում,
- ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ,

- աշխատանք տպագիր և էլեկտրոնային սկզբնաղբյուրների նյութերով՝ գիտական բազային գործիքների օգտագործմամբ (մեջբերումներ, հղումներ, ամփոփումներ, եզրակացություններ, առաջարկություններ),
- զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն, աղբյուրների գնահատում և համադրում,
- հիմնախնդիրների հետազոտում,
- հանդիպումներ,
- մրցույթների անցկացում,
- հաշվետվությունների և էսսեների պատրաստում,
- բանավեճերի կազմակերպում,
- ՏՀՏ կիրառմամբ թվային գործիքների օգտագործում,
- դերային խաղեր,
- թղթապանակների պատրաստում, մեկնաբանում,
- անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

Գնահատման գործընթացում կիրառվելու են բազմաթիվ եղանակներ, բայց հիմնական շեշտը դրվելու է ձևավորող գնահատման վրա: Ձևավորող գնահատման ձևերից հատկապես կարևորվելու է հետադարձ կապը, որը աշակերտների ձեռքբերումներն արձանագրելու և բացթողումների շտկման ուղիները գտնելու հնարավորություն է տալու: Մեծ դասարաններում կարող է կիրառվել ձևավորող գնահատման ընդհանրական տարբերակը, երբ ուսուցիչն

ամբողջ դասարանին ներկայացնում է սովորողների մոտ նկատվող տիպական սխալները: Փոքր դասարաններում կարող է կիրառվել անհատական հետադարձ կապի համակարգը:

Մեծ կարևորություն է տրվելու գնահատման եղանակները դասավանդման մեթոդների հետ միասնության մեջ դիտարկելու մոտեցմանը: Գնահատումը չպետք է դիտարկվի դասավանդման մեթոդներից անջատ, քանի որ դա կարող է բերել գիտելիքների, հմտությունների ոչ համարժեք գնահատման:

Գնահատման գործընթացում անհրաժեշտ հաշվի առնել 3 գործոն՝

- սովորողի արդյունքի գնահատում,
- սովորողի առաջընթացի գնահատում,
- սովորողի գործադրած ջանքի գնահատում:

Կիրառվելու են գնահատման գրավոր և բանավոր եղանակներ:

7-րդ դասարան

Բովանդակություն

Թեմա 1.Մարդ և բնություն

1.1. Մարդը՝ որպես բնության մաս
1.2. Մարդու պահանջմունքը
1.3. Մարդ- բնություն հարաբերությունների էվոլյուցիան

Թեմա 2.Մարդ- հասարակություն

2.1. Հասարակական կյանքի առանձնահատկությունները

2.2. Հասարակության սոցիալական կազմը

Թեմա 3. Մարդ- ճանաչողություն- վարքագիծ

3.1. Ճանաչողություն և վարքագիծ

3.2. Հույզերի ճանաչում և կառավարում

3.3. Արդյունավետ հաղորդակցում

Թեմա 4. Մարդ- բարոյականություն

4.1. Բարոյական նորմերի նշանակությունը: Բարոյականության ոսկե կանոնը:

4.2. Բարոյականության հիմնական հասկացությունները

Թեմա 5. Մարդ- գեղեցկություն

5.1. Գաղափար գեղեցիկի մասին

5.2. Մեզ շրջապատող միջավայրի գեղագիտական ընկալումը

Թեմա 6. Մարդ- իրավունք

6.1. Իրավական և բարոյական նորմեր: Իրավունք

6.2.Իրավունքի աղբյուրները

Թեմա 7. Մարդ- տնտեսություն

7.1. Պահանջմունքներ, կարիքներ, ցանկություններ

7.2. Տնտեսական որոշումների կայացում, սակավության հիմնախնդիր

7.3. Արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում

7.4. Անձնական բյուջե, եկամտի բաշխում, խնայողություններ ներկայում և ապագայում

Թեմա 8. Մարդ- քաղաքականություն

8.1. Քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում

8.2. Մարդը որպես քաղաքական էակ

Թեմատիկ պլանի նմուշօրինակ

Տարեկան 34 ժամ

Թեմայի անվանումը և նպատակը	Թեմայի բովանդակությունը	Ժամաքանակը	Վերջնարդյունքները
Թեմա 1. Մարդ-բնություն **Նպատակները** • Օրինակների միջոցով ներկայացնել բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը:	**Դաս 1**. Մարդը՝ որպես բնության մաս: Մարդու պահանջմունքները: **Դաս 2**. Մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիան:	**3** ժամ	**1.1.** Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում: **1.2.** Նկարագրի մարդու պահանջմունքները: **1.3.** Առաջարկի բնության և հասարակության

• Բացատրել մարդու պահանջմունքները:			ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:
	Դաս 1. Մարդը՝ որպես բնության մաս: Մարդու պահանջմունքները:	**1** ժամ	Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում: Նկարագրի մարդու պահանջմունքները:
	Դաս 2. Մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիան:	**2** ժամ	Օրինակների միջոցով ներկայացնի մարդ- բնություն հարաբերությունների էվոլյուցիան: Առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:
Թեմա 2. Մարդ-հասարակություն **Նպատակը** Ներկայացնել մարդու և հասարակության փոխկապվածությունը, հասարակական մեծ և փոքր խմբերի ու շերտերի նմանություններն ու	**Դաս 3**. Հասարակական կյանքի առանձնահատկությունները: **Դաս 4**. Հասարակության սոցիալական կազմը:	**3** ժամ	**2.1**. Մարդու էությունից բխեցնի խմբի և հասարակության անհրաժեշտությունը: **2.2**. Տարբերակի հասարակության փոքր և մեծ խմբերը: **2.3**. Ներկայացնի հասարակության սոցիալական

տարբերությունները:			կազմը:
	Դաս 3. Հասարակական կյանքի առանձնահատկությունները:	**1** ժամ	Ներկայացնի խմբի և հասարակության անհրաժեշտությունը:
	Դաս 4.Հասարակության սոցիալական կազմը:	**2** ժամ	Տարբերակի հասարակության փոքր և մեծ խմբերը: Ներկայացնի հասարակության սոցիալական կազմը:
Թեմա 3. Մարդ-ճանաչողություն-վարքագիծ **Նպատակը** Բացատրել ճանաչողության, սոցիալական հմտությունների, հույզերի, վարքագծի, արդյունավետ հաղորդակցման կարևորությունը մարդու կյանքում և որոշակի օրինակների ու իրավիճակների	**Դաս 5**. Ճանաչողություն և վարքագիծ: **Դաս 6**. Հույզերի ճանաչում և կառավարում: **Դաս 7**. Արդյունավետ հաղորդակցում:	**4** ժամ	**3.1**. Մեկնաբանի ճանաչողության և վարքագծի դերը մարդու և հասարակության կյանքում: **3.2**. Վերլուծի սեփական հույզերը, մտքերը, թվարկի հույզերի կառավարման հնարներ: **3.3**. Բացատրի արդյունավետ հաղորդակցվելու

վերլուծության միջոցով զարգացնել ինքնաճանաչողությունը և իրավիճակին համարժեք արձագանքելու հմտությունները:			նշանակությունը:
	Դաս 5. Ճանաչողություն և վարքագիծ:	**1** ժամ	Մեկնաբանի ճանաչողության և վարքագծի դերը մարդու և հասարակության կյանքում:
	Դաս 6. Հույզերի ճանաչում և կառավարում:	**1** ժամ	Վերլուծի սեփական հույզերը, մտքերը, թվարկի հույզերի կառավարման հնարներ:
	Դաս 7. Արդյունավետ հաղորդակցում:	**2** ժամ	Բացատրի արդյունավետ հաղորդակցվելու նշանակությունը:
Թեմա 4. Մարդ-բարոյականություն **Նպատակները** • Ներկայացնել բարոյական նորմերի անհրաժեշտությունը, բացատրել բարոյագիտության առանցքային	**Դաս 8**. Բարոյական նորմերի նշանակությունը: Բարոյականության ոսկե կանոնը: **Դաս 9**. Բարոյականության հիմնական հասկացություններ:	**5** ժամ	**4.1**.Հիմնավորի բարոյական նորմերի անհրաժեշտությունը: **4.2**. Վերլուծի բարոյականության ոսկե կանոնը: **4.3**. Մեկնաբանի բարոյականության հիմնական

հասկացությունները: • Զարգացնել բարոյական դատողություններ անելու կարողությունը՝ որոշակի իրավիճակներ վերլուծելու միջոցով:	**Դաս 10**. Էգոիզմ և ալտրուիզմ:		հասկացությունները: **4.4**. Համեմատի և հակադրի էգոիզմն ու ալտրուիզմը:
	Դաս 8. Բարոյական նորմերի նշանակությունը: Բարոյականության ոսկե կանոնը:	**2** ժամ	Հիմնավորի բարոյական նորմերի անհրաժեշտությունը: Վերլուծի բարոյականության ոսկե կանոնը:
	Դաս 9. Բարոյականության հիմնական հասկացություններ:	**2** ժամ	Մեկնաբանի բարոյականության հիմնական հասկացությունները:
	Դաս 10. Էգոիզմ և ալտրուիզմ:	**1** ժամ	Համեմատի և հակադրի էգոիզմն ու ալտրուիզմը:
Թեմա 5. Մարդ-գեղեցկություն **Նպատակը** Զարգացնել գեղագիտական ճաշակ ու պատկերավոր խոսք՝ բնութագրելու	**Դաս 11**. Գաղափար գեղեցիկի մասին: **Դաս 12**. Մեզ շրջապատող միջավայրի գեղագիտական ընկալումը:	**4** ժամ	**5.1**. Ներկայացնի «գեղեցիկ» հասկացությունը և իրեն շրջապատող իրերի գեղեցկությունը: **5.2**. Մեկնաբանի

գեղեցիկն ու տգեղը, դրանք դիտարկելով բնության, հասարակության և մշակույթի համատեքստում:	**Դաս 13.** Գեղեցիկն արվեստում:		պատասխանատվության իր բաժինը գեղեցիկի պահպանման գործում: **5.3.** Արվեստի գործերից օրինակներ բերի գեղագիտական հիմնական հասկացությունները մեկնաբանելիս:
	Դաս 11. Գաղափար գեղեցիկի մասին:	**1** ժամ	Ներկայացնի «գեղեցիկ» հասկացությունը և իրեն շրջապատող իրերի գեղեցկությունը:
	Դաս 12. Մեզ շրջապատող միջավայրի գեղագիտական ընկալումը:	**1** ժամ	Մեկնաբանի պատասխանատվության իր բաժինը գեղեցիկի պահպանման գործում:
	Դաս 13. Գեղեցիկն արվեստում:	**2** ժամ	Արվեստի գործերից օրինակներ բերի գեղագիտական հիմնական հասկացությունները մեկնաբանելիս:
Թեմա 6. Մարդ-իրավունք	**Դաս 14.** Իրավունք. իմաստը,	**3** ժամ	**6.1.** Բացատրի «իրավունք»

Նպատակները • Ներկայացնել մարդկանց համակեցության համար անհրաժեշտ և նրանց վարքագիծը կարգավորող իրավունքի կարևորությունը: • Զարգացնել դրանց վերաբերյալ վերլուծական հմտություններ ու վերաբերմունք:	դերը, հասկացությունը, բնույթն ու առաջացումը: **Դաս 15**. Իրավական և բարոյական նորմեր: Իրավունքի աղբյուրները:		հասկացության իմաստը և դերը մարդու կյանքում: **6.2**. Տարբերակի իրավական և բարոյական նորմերը: **6.3**.Ներկայացնի իրավունքի աղբյուրները՝ նորմատիվ իրավական ակտ, իրավական սովորույթ, նախադեպ:
	Դաս 14. Իրավունք. իմաստը, դերը, հասկացությունը, բնույթն ու առաջացումը:	**1** ժամ	Բացատրի «իրավունք» հասկացության իմաստը և դերն ու կարևորությունը մարդու կյանքում:
	Դաս 15. Իրավական և բարոյական նորմեր: Իրավունքի աղբյուրները:	**2** ժամ	Տարբերակի իրավական և բարոյական նորմերը: Ներկայացնի իրավունքի աղբյուրները՝ նորմատիվ իրավական ակտ, իրավական սովորույթ, նախադեպ:

Թեմա 7. Մարդ-տնտեսություն **Նպատակները** • Բացատրել, թե ինչպես կարելի է համադրել իրենց և այլոց կարիքները, ցանկությունները և պահանջմունքները առկա ռեսուրսների հետ: • Մեկնաբանել սակավության հիմնախնդիրը: • Նկարագրել արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները, խնայողությունների դերը ներկա և ապագա կյանքում:	**Դաս 16.** Տնտեսական որոշումների կայացում, սակավության հիմնախնդիր: **Դաս 17.** Արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում: **Դաս 18.** Մեր պահանջմունքները, կարիքներն ու ցանկությունները: **Դաս 19.** Անձնական բյուջե, եկամտի բաշխում, խնայողություններ ներկայում և ապագայում:	**5** ժամ	**7.1.** Հետևություններ անի՝ ելնելով կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելու իրողությունից: **7.2.** Նկարագրի արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները: **7.3.** Համադրի անձնական և ընտանեկան եկամուտներն ու ծախսերը, պլանավորի բյուջեն՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը: **7.4.** Բացատրի ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելու նշանակությունը:

	Դաս 16. Տնտեսական որոշումների կայացում, սակավության հիմնախնդիր:	**1** ժամ	Հետևություններ անի՝ ելնելով կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելու իրողությունից:
	Դաս 17. Արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում:	**1** ժամ	Նկարագրի արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները:
	Դաս 18. Մեր պահանջմունքները, կարիքներն ու ցանկությունները:	**1** ժամ	Համադրի անձնական և ընտանեկան եկամուտներն ու ծախսերը, պլանավորի բյուջեն՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը:
	Դաս 19. Անձնական բյուջե, եկամտի բաշխում, խնայողություններ ներկայում և ապագայում:	**2** ժամ	Բացատրի ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելու նշանակությունը:

Թեմա 8. Մարդ-քաղաքականություն **Նպատակը** Մեկնաբանել քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում և անհատի կյանքում, օրինակների միջոցով ցույց տալ մարդու դերը քաղաքականության մեջ:	**Դաս 20**. Քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում: **Դաս 21**. Մարդը՝ որպես քաղաքական էակ:	**3** ժամ	**8.1**.Հիմնավորի քաղաքականության կարևորությունը մարդու կյանքում: **8.2**.Ցույց տա քաղաքականության և հասարակական կյանքի այլ ոլորտների փոխադարձ կապերը:
	Դաս 20. Քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում:	**2** ժամ	Հիմնավորի քաղաքականության կարևորությունը մարդու կյանքում:
	Դաս 21. Մարդը՝ որպես քաղաքական էակ:	**1** ժամ	Ցույց տա քաղաքականության և հասարակական կյանքի այլ ոլորտների փոխադարձ կապերը:

Դասի պլանի նմուշ-օրինակ

7-րդ դասարան

Թեմա1.Մարդ-բնություն	**Դասի նպատակը և վերջնարդյունքը**	**Քայլեր**	**Գնահատում**
Դաս 1. Մարդը՝ որպես բնության մաս:	Օրինակների միջոցով ձևավորել բնության, մարդու և հասարակության փոխկապվածության կարևորության գիտակցումը: **Վերջնարդյունք** Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում:	**Ծանոթացում 10 րոպե** (Դասի թեմային անդրադառնալուց առաջ ուսուցիչը համառոտ զրույցում ներկայացնում է առարկայի նպատակը, խնդիրները, հիմնական դպրոցի դասընթացի բովանդակային բաղադրիչները) **Քայլ 1. 5 րոպե** **Մտագրոհ՝** «Ո՞վ է մարդը» **Քայլ 2. 10 րոպե** **Առաջադրանք** Դասանյութում շարադրված տեղեկատվական տեքստն ընթերցելիս դուրս բերել և գրառել իմաստասերներից յուրաքանչյուրի արտահայտած բանալի միտքը: **Քայլ 3. 5 րոպե** **Հարցադրում՝** ո՞րն է առհասարակ մարդ լինելու կոչումը: **Քայլ 4. 10 րոպե**	**5 րոպե** Թվարկել. • մարդու 4–5 հատկանիշ, որոնցով նա նմանվում է կենդանիներին, • մարդուն հատուկ 4–5 հատկություն, որոնցով նա տարբերվում է կենդանիներից, • մեկ-երկու փոխկապվածություն մարդու և բնության միջև:

		«Քարակոփ կացարան» պատմվածքի հատվածն ընթերցելիս դուրս բերել և վերլուծել յուրաքանչյուր պարբերության բանալի մտքերը՝ կապված մարդ–բնություն հարաբերությունների հետ:	
Դաս 2. Մարդու պահանջմունքները	Ձևավորել մարդու պահանջմունքները գիտակցելու կարողություն:	**Քայլ 1. 10 րոպե** **Քննարկում** Ի՞նչն է մարդուն ստիպում կատարել ինչ–որ գործողություն կամ զբաղվել որևէ բանով:	**5 րոպե** Թվարկել պահանջմունքների օրինակներ՝ ըստ տեսակների:

	Վերջնարդյունք Նկարագրի մարդու պահանմունքները:	Ի՞նչ պահանջմունքներից դրդված ենք կատարում մեր գործողությունները: **Քայլ 2. 15 րոպե** Բացատրել պահանջմունքների ծագման տեսակները: Ներկայացնել բնական, մշակութային, սոցիալական, նյութական և հոգեւոր պահանջմունքների օրինակներ: **Քայլ 3. 15 րոպե** Անհատապես լրացնել Աղյուսակ 1–ը, խմբով քննարկել և համեմատել դուրս բերած պահանջմունքները, դրանց պատճառներն ու հետևանքները:	
Դաս 3. Մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիան	Ձևավորել մարդ-բնություն կապի փոփոխությունը վերլուծելու կարողություն:	**Քայլ 1. 10 րոպե** **Առաջադրանք** Ընթերցել տեքստը և դուրս գրել յուրաքանչյուր պարբերության գլխավոր միտքը:	**5 րոպե** Լրացնել դասանյութում տրված աղյուսակը:

	Վերջնարդյունք Առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:	**Քայլ 2. 15 րոպե** Սովորողների կողմից պարբերություններից դուրս գրած կարևոր մտքերը համեմատել և հանձնարարել մեկնաբանել «Մարդու անվերահսկելի գործողությունների հետևանք է նաև կլիմայական համակարգի փոփոխությունը» միտքը: **Քայլ 3. 15 րոպե** **Առաջադրանք** Մշակել բնության և հասարակության ներդաշնակությունն ապահովող կանոններ և ներկայացնել դասարանում:	

Նախագծային ուսուցման մեթոդաբանությունը

Նախագծային ուսուցումը՝ որպես առանցքային կարողունակությունների ձևավորման, դրսևորման ու դրանց գնահատման արդյունավետ մեթոդ

Աշխարհի շատ և շատ ուսուցիչներ գտնում են, որ թե՛ դասարանում, և թե՛ դասերից դուրս նախագծային ուսուցումը կարևոր ուսումնական մեթոդ է, որը սովորողներին հնարավորություն է տալիս տիրապետել անհրաժեշտ կրթական կարողունակություններին, զարգացնել հետագա հաջողության համար անհրաժեշտ հմտություններ և կառուցել կյանքի և աշխարհի մարտահրավերները լուծելու անհրաժեշտ անձնական արժեհամակարգ:

Նախագծային ուսուցումը դասավանդման մեթոդ է, որի միջոցով սովորողները ձեռք են բերում գիտելիքներ և հմտություններ՝ որոշակի ժամանակ հետազոտելով գործնական, համալիր և հրատապ բնույթի հարցեր, խնդիրներ և մարտահրավերներ[1]:

Նախագծային ուսուցման մեթոդը ենթադրում է ուսումնական գործընթացի այնպիսի մոդելավորում, երբ սովորողները որոշակի տևական ժամանակահատվածում աշխատում են մարդկանց, հասարակությանը հուզող կենսական կարևոր հիմնախնդիրների շուրջ, ձեռնամուխ լինում իրական, արդիական հիմնահարցերի ուսումնասիրության գործին: Նրանք սովորում են հետազոտություններ կատարել. աշխատել տեղեկատվական աղբյուրների, տեքստային, թվային և գրաֆիկական տեղեկույթի հետ, կողմնորոշվել տեղեկատվության «ծովում», հավաքել, վերլուծել և գնահատել հիմնահարցին առնչվող տարաբնույթ տեղեկույթ, կազմակերպում են

[1] Շարադրված է՝ ըստ https://www.pblworks.org/what-is-pbl կայքի (դիտված՝ 12.11.22):

հարցազրույցներ, հանդիպումներ խնդրով շահագրգիռ տարբեր անհատների և կառույցների ներկայացուցիչների հետ:

Նախագծային ուսուցման մեթոդը ստեղծում է ուսումնական այնպիսի միջավայր, որտեղ խրախուսվում և խթանվում է խմբային աշխատանքը և համագործակցությունը:

Ինչու՞ կիրառել նախագծային ուսուցման մեթոդը[2]

Նախագծային ուսուցումն արդյունավետ մեթոդ է, քանի որ այն միախառնում է բովանդակության յուրացումը, բովանդակալից աշխատանքը և անձնական կապն ուսումնառության արդյունավետ փորձառություններ ստեղծելու համար:

Բազում հետազոտություններ վկայում են, որ նախագծային ուսուցումը կարող է շրջադարձային լինել սովորողների համար, հատկապես նրանց, ովքեր չեն ուզում սովորել: Այժմ՝ առավել քան երբևէ, մենք կարիք ունենք երիտասարդների, ովքեր պատրաստ են և ի վիճակի են հաղթահարելու կյանքի և աշխարհի մարտահրավերները, և նրանց համար լավագույն միջոցը նախագծային ուսուցման գործընթացին մասնակցությունն է:

Հանրակրթության պետական նոր չափորոշիչը խրախուսում է կրթական տարբեր աստիճաններում ուսումնական նախագծային աշխատանքների կազմակերպումը: Ավելին, Հանրակրթության պետական նոր

[2] Շարադրված է՝ ըստ https://www.pblworks.org/why-project-based-learning կայքի (դիտված՝ 12.11.22):

չափորոշչով 7-12-րդ դասարանում յուրաքանչյուր սովորող տարեկան պետք է իրականացնի առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկայախմբից[3]:

Որևէ երկրի կրթական համակարգում նոր մոտեցումների/պահանջների ներդրման արդյունավետության երաշխիքներից են ուսուցիչների մտորումները անծանոթ գործընթացի մասին:

Նախագծային ուսուցման աշխատանքների մեկնարկին նախապատրաստվելիս կարևոր է, որ ուսուցիչները իրենք իրենց համար պատասխանեն ստորև նշված հարցերին.

- ի՞նչ պետք է իմանամ սովորողների մասին, որպեսզի կարողանամ կազմել և իրականացնել ուսումնական նախագծեր, որոնք կառաջացնեն նրանց հետաքրքրությունը, կարժևորեն նրանց ուժեղ կողմերն ու ինքնությունը, կբավարարեն նրանց կարիքները:
- Ինչպե՞ս կարող եմ համապատասխան աջակցություն ցուցաբերել բոլոր սովորողներին՝ յուրաքանչյուրի ակադեմիական մտածողությունը և ճանաչողական աճը բարելավելու համար:
- Ինչպե՞ս կարող եմ ապահովել այնպիսի փորձառություն, որը կխորացնի սովորողների՝ կարդալու, գրելու, լսելու և խոսելու կարողությունը տարբեր համատեքստերում և առարկաներում:
- Ինչպե՞ս կարող եմ զարգացնել սովորողի ձայնը, ընտրությունը, գործունությունը և փոխադարձ կապը դասարանում[4]:

Անվիճելի է, որ հասարակական կարևոր և արդիական հիմնախնդիրներին նվիրված ուսումնական նախագծերը կարող են օգտակար լինել և՛ սովորողների, և՛ ուսուցիչների համար: Սովորողները ձեռք են բերում ժամանակն արդյունավետ կառավարելու, որոշումներ կայացնելու, ստեղծագործելու, տվյալ իրավիճակին

---

[3] Հանրակրթության պետական չափորոշիչ (ՀՀ կառավարության 2021 թ.-ի փետրվարի 4-ի N 136-Ն որոշման 9-րդ գլխի 46-րդ կետ):

[4] Շարադրված է՝ ըստ https://www.pblworks.org/educational-equity կայքի (դիտված՝ 11.12.22):

համապատասխան կողմնորոշվելու կարողություն: Ուսուցիչները զարգացնում են տարբեր տևողության և բարդության աշխատանքներ՝ պլանավորելու, տեղեկատվական տեխնոլոգիաներին առավել արդյունավետ տիրապետելու, թիմային աշխատանք կազմակերպելու և կառավարելու, գնահատման տարատեսակ ձևեր և միջոցներ կիրառելու, դրանց համար համապատասխան գործիքներ մշակելու և կազմելու հմտություններ: Նրանք ապահովում են սովորողի ինքնուրույնությունը, խորհուրդներ են տալիս, հետևում ընթացքին, ուղղորդում, դառնում խորհրդատու և օգնական:

Վերը նշված արդյունքների ապահովման համար առանցքային դեր ունի սովորողների՝ նախագծային ուսումնառության միջոցով սովորելու շարժառիթը: Երբ այն առկա է, առավել ևս նման կերպ սովորելը/աշխատելը արդեն իսկ ընդունված մշակույթ է, ակնկալվող արդյունքներին հասնելն առավել հեշտ է: Խնդիրը բարդ է այն դեպքում, երբ տվյալ մշակույթի առկայություն չկա: Նման դեպքերում ուսուցչի առաջնահերթ խնդիրն է դառնում սովորողների մոտ համապատասխան խթան առաջացնելը: Ամերիկացի ականավոր փիլիսոփա, հոգեբան, 20-րդ դարի կրթության և սոցիալական կարևորագույն բարեփոխումների հեղինակ Ջոն Դյուին կարծում էր, որ այդպիսի խթաններից մեկը կարող է լինել սովորողներին ինքնուրույն գործելու (այդ թվում՝ խնդիրներ բարձրաձայնելու, որոշումներ կայացնելու) հնարավորություն տալը, սակայն այդ ինքնուրույնությունը պետք է գիտակցված որոշում լինի (cognitive act), որում ուսուցչի դերն առանցքային է[5]:

Ուսումնական նախագծերում սովորողների ներգրավում և իմաստալից մասնակցություն ապահովելու համար կարևորագույն նախապայման է նախագծի իրական կյանքի և խնդիրների հետ կապված[6] լինելը: Սա հավասարապես վերաբերում է նախագծի թե՛ բովանդակությանը, թե՛ դրա իրականացման համար անհրաժեշտ

[5]Շարադրված է՝ ըստ https://my.pblworks.org/resource/blog/bie_book_excerpt_the_roots_of_gold_standard_pbl_in_kilpatrick_and_dewey կայքի (դիտված՝ 11.12.22):
[6] Անգլերենով authentic, authenticity բառերն են օգտագործվում:

գործիքներին: Ավելին, հետազոտությունները ցույց են տալիս, որ իրական կյանքին մոտ, ռեալ խնդիրների անդրադարձող ուսումնական նախագծերը ոչ միայն խթանում են սովորողների մասնակցությունը, այլև դրական ազդեցություն ունեն սովորողների ձեռքբերումների վրա[7]:

Սովորողներին նախապատրաստելու և խթանելու համար ուսուցիչը տարբեր հնարներ կարող է օգտագործել՝ ամենապարզ զրույցներից ու քննարկումներից սկսած, մինչև կոնկրետ օրինակների ներկայացում: Այդ զրույցներին/հանդիպումներին կարելի է հրավիրել հայտնի և ազդեցիկ մեծահասակների, որպեսզի վերջիններս իրենց խոսքով խրախուսեն սովորողներին: Առավել արդյունավետ կարող է լինել, երբ կոնկրետ օրինակները ներկայացնեն դրանց անմիջական կազմակերպիչներն ու մասնակիցները: Ու շատ ավելի արդյունավետ կլինի, եթե դրանք լինեն տվյալ դպրոցի ավելի բարձր դասարանների սովորողներ կամ շրջանավարտներ:

Ուսումնական նախագծի առանձնահատկությունները, դրա կազմակերպումը

Ուսումնական նախագծերը ենթադրում են բազմաբնույթ աշխատանքներ, ընդ որում հետաքրքիր, գրավիչ, ինչն էլ առավել լայն հնարավորություններ է ընձեռում բոլոր սովորողների՝ այդ աշխատանքներին ակտիվ մասնակցությանն ու ներգրավմանը, բոլոր սովորողների ներառմանը, ինչպես նաև նրանց համար հավասար պայմանների ապահովմանը: Վերջինս ենթադրում է բոլոր սովորողների անհատական առանձնահատկությունների, կրթական կարիքների և հետաքրքրությունների, նրանցից յուրաքանչյուրի ուսումնառության ոճի, նրանց ուժեղ կողմերի ու հնարավորությունների իմացում և խրախուսում՝ սովորողներին՝ նախագծային աշխատանքներին

[7]The Cambidge Handbook of Learning Sciences, Blumenfeld, Kempler, & Krajcik, 2006.

մասնակից դարձնելու և որոշակի խնդիրներ լուծելու, կոնկրետ աշխատանքներ կատարելու առումով: Այսպիսով, նախագծերի միջոցով կարելի է համալիր մոտենալ և միաժամանակ լուծել մի շարք խնդիրներ՝ պահպանելով ժամանակակից մանկավարժության, կրթության կարևորագույն սկզբունքները.

- **մասնակցային կրթություն և հավասար պայմաններ բոլոր սովորողների համար**. սովորողի հետաքրքրությունների, հնարավորությունների ու պրակտիկ փորձի հաշվառում,
- **սովորողակենտրոն ուսումնառություն**. սովորողների ակտիվ մասնակցություն ուսուցման և ուսումնառության, «գիտելիքի կառուցման» գործընթացին, անձնական պատասխանատվություն՝ խմբային աշխատանքներում,
- **կրթություն՝ գործելու միջոցով, հմտությունների և կարողությունների շեշտադրում, կարողունակությունների ձևավորում,**
- **կենսական խնդիրների լուծում գիտելիքների կիրառման միջոցով, այլ ոչ թե սոսկ գիտելիքների ձեռքբերում,**
- **շփման և հաղորդակցության հմտությունների, համագործակցության և փոխօգնության կարողությունների ձևավորում**[8]**:**

  Այսպիսով, արդյունավետ ուսումնական նախագիծը ենթադրում է.

✓ **մտահոգիչ հարցի կամ իրավիճակի առկայություն՝ որպես մարտահրավեր**. նախագիծը կառուցվում է որևէ արդիական, իմաստալից խնդրի/իրավիճակի շուրջ և փորձում է դրան լուծում տալ, կամ էլ որևէ կարևոր հարցի շուրջ, որին պետք է գտնել պատասխան:

[8] Աղբյուրը՝ https://www.pblworks.org/educational-equity (դիտված՝11.12.22):

✓ **Հետևողական հետաքրքրություն և կանոնավոր ուսումնասիրություններ/հետազոտություն**. աշակերտները ներգրավվում են հարցեր առաջադրելու, ռեսուրսներ գտնելու և ձեռք բերած տեղեկատվությունն արդյունավետ կերպով օգտագործելու խստապահանջ և տևական գործընթացում:

✓ **Նախագծերի արդիականությունը և կյանքին մոտ լինելը.** նախագիծն իրական աշխարհի համատեքստում է կառուցված, ներառում է ժամանակակից/արդիական առաջադրանքներ և գործիքներ, որակի չափանիշներ կամ ազդեցություն, կամ էլ նախագիծը հասցեագրում է ուսանողների կյանքի անձնական մտահոգությունները, հետաքրքրությունները և խնդիրները:

✓ **Աշակերտների ձայն և ընտրություն**. աշակերտները որոշումներ են կայացնում նախագծի վերաբերյալ, ներառյալ, թե ինչպես են նրանք աշխատելու և ինչ են ստեղծելու, և արտահայտում են իրենց սեփական գաղափարներն իրենց իսկ խոսքով ու գործով:

✓ **Հանրային արդյունք**. սովորողների աշխատանքի արդյունքը հրապարակավ ցուցադրվում, քննարկվում և քննադատվում է դպրոցում կամ համայնքում՝ ավելի լայն հանրության առաջ:

✓ **Անդրադարձ.** սովորողներն ու ուսուցիչներն անդրադառնում են իրենց ձեռքբերումներին և ուսման գործընթացին նախագծի ողջ ընթացքում, աշխատանքի որակին, ընթացքում ծագած խոչընդոտներին և դրանց հաղթահարման ռազմավարություններին:

✓ **Քննադատություն և վերանայում.** սովորողները տալիս, ստանում և կիրառում են խորհուրդներ՝ ուղղված ստեղծված արտադրանքը և իրականացման գործընթացը բարելավելուն:

Նախագծային ուսուցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում առկա հանրակրթական դաշտի պահանջներն ու կանոնակարգումները

1. **Նախագծում և պլանավորում**. ուսուցիչն իր սաներին առաջարկում է իրական կյանքում առկա դժվար խնդիրների, իրավիճակների որոշակի թեմաներ կամ արդի հասարակությանը հուզող կարևոր հարցեր: Նախնական թեմաների շուրջ աշակերտները զարգացնում են իրենց հետաքրքրող բուն հարցերը, կամ դրանց ավելացնում են նոր, հարակից հարցեր, և ուսուցչի հետ համագործակցաբար նեղացնում, հստակեցնում են իրենց նախագծի ուսումնասիրության շրջանակը:
2. **Պետական չափորոշիչների և տվյալ առարկայի բովանդակության՝ տվյալ դասարանի համար առաջադրված պետական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքների հետ կապի ապահովում**. ուսուցիչն օգտագործում է չափորոշիչները՝ նախագիծը պլանավորելու, ինչպես նաև համոզվելու համար, որ այն վերաբերում է առարկայի բուն բովանդակությամբ մատուցվող գիտելիքների ըմբռնմանը և սահմանված վերջնարդյունքների ձևավորմանը:
3. **Նախագծային ուսումնառության մշակույթի ձևավորումը**. ուսուցիչն ուղղակիորեն և անուղղակիորեն նպաստում է աշակերտների անկախությանը և աճին, քաջալերում է ի սկզբանե անորոշ արդյունքով բարդ ուսումնասիրությունների իրականացումը[9], սատարում է թիմային ոգու ձևավորմանը և մշտապես հրավիրում է աշխատանքների որակի հանդեպ ուշադրություն:

[9] Օրինակ՝ հետազոտություն համայնքի անդամների կամ դպրոցի ուսուցիչների, աշակերտների շրջանում կոռուցիայի ընկալումների, գենդերային կարծրատիպերի, քաղաքացիական դիրքորոշումների մասին: Լայն առումով ի նկատի են առնվել ուսումնասիրությունները, որոնց արդյունքը հնարավոր չէ սկզբում կանխատեսել և չափելի դարձնել:

4. **Աշակերտների ընթացիկ աշխատանքների կառավարում.** ուսուցիչներն աշխատում են աշակերտների հետ՝ կազմակերպելու առաջադրանքներ և ժամանակացույցեր, միջանկյալ ստուգումների համար սահմանելու կետեր և վերջնաժամկետներ, գտնելու և օգտագործելու ռեսուրսներ, ստեղծելու և հանրայնացնելու ապրանքներ:
5. **Աշակերտների ուսումնառության ուղղորդում.** ուսուցիչներն օգտագործում են մի շարք դասեր, գործիքներ և ուսուցողական ռազմավարություններ՝ աջակցելու բոլոր աշակերտներին հասնելու իրենց նախագծի նպատակներին:
6. **Աշակերտի ուսումնառության գնահատում.** ուսուցիչները կազմակերպում են գիտելիքների, ըմբռնման և հաջողության հմտությունների ձևավորող և ամփոփիչ գնահատումներ՝ ներառելով թիմային և անհատական աշխատանքի ինքնուրույն և հասակակիցների կողմից գնահատում:
7. **Ուսուցչի ներգրավվածությունը և սովորողների վարպետությանն ուղղված ջանքերը**. ուսուցիչները սովորում և ստեղծագործում են սովորողների կողքին և բացահայտում են, թե երբ են վերջիններս զգում կոնկրետ որոշակի հմտությունների ձևավորման, վերաուղղորդման, խրախուսման կարիք, ինչպես նաև հաջողությունները ճանաչելու և միասին նշելու կարիք:

Գործնական աշխատանքների մակարդակում կարելի է ասել, որ ուսումնական նախագծային աշխատանքն ունի իրականացման քայլերի հետևյալ տրամաբանությունը.

- ✓ հիմնախնդրի ձևակերպում,
- ✓ փաստերի հավաքագրում, վերլուծություն, մշակում,
- ✓ աշխատանք տեղեկատվական աղբյուրների հետ,

- ✓ հարցազրույցներ, հանդիպումներ, քննարկումներ շահագրգիռ անձանց և/կամ կառույցների հետ,
- ✓ ստացված տեղեկատվության ամփոփում, վերլուծություն,
- ✓ հիմնախնդրի լուծմանն ուղղված գործողությունների ծրագրի առաջարկ:

Հարկ է նշել, որ, ըստ տևողության, ուսումնական նախագիծը կարող է լինել *կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ*, ըստ մասնակցության ձևաչափի՝ *անհատական և խմբային*, ըստ բովանդակության՝ *առարկայական (ուսումնական նախագծի թեման ընտրվում է առարկայական ծրագրով նախատեսված թեմաներից), միջառարկայական (ուսումնական նախագծի թեման ընտրվում է նույն կրթական աստիճանի, մեկից ավելի առարկայական ծրագրերի թեմաներից), ինչպես նաև վերառարկայական հմտություններին միտված*[10] *(ուսումնական նախագծի թեման ընտրվում է իրական կյանքում հանդիպող արդիական խնդիրներից և միտված է կարողունակությունների, դրանց առանձին բաղադրիչների ձևավորմանը կամ զարգացմանը)*:

Օրինակ՝

- ✓ **առարկայական**. դիցուք, եթե նախատեսվում է ուսումնական նախագիծն իրականացնել 10-րդ դասարանի «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում, ապա պետք է ուսումնասիրել առարկայի ծրագիրը և ընտրել այնպիսի թեմա կամ թեմաներ, որը կներառի տվյալ թեմայի կամ թեմաների վերաբերյալ առավել ընդգրկուն շրջանակ, օրինակ՝ թեմա 3. **Շուկայական տնտեսություն**[11], ուսումնական նախագծի թեման՝ **«Գնաճի բացասական ազդեցությունը քաղաքացիների խնայողությունների վրա»**:

---

[10] Տե՛ս Մ.Թադևոսյան, Ս.Խաչատրյան, Վ. Սողոմոնյան և այլք, «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում» կրթական ռեսուրսներ, 2017:
[11] ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի 30-Լ հրաման:

- ✓ **Միջառարկայական.** եթե նախատեսվում է ուսումնական նախագիծն իրականացնել 9-րդ դասարանի «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Հասարակագիտություն» առարկաների շրջանակներում[12] և ընտրել թեմաներից օրինակ՝ ՀՀ տնտեսությունը, ՀՀ բնությունը և բնության պահպանությունը, Պետություն և տնտեսությունը, ապա ուսումնական նախագծի թեման կարող է լինել **«ՀՀ-ում անտառահատման վնասակար հետևանքները կենսաբազմազանության վրա»:** Որպես արդյունք՝ իրականացվող աշխատանքը կնպաստի սովորողների մոտ ձևավորել պատկերացումներ կենսաբանական ռեսուրսների, կենսաբազմազանության արժեքի, կենսաբազմազանության վրա ազդող գործոնների վերաբերյալ, զարգացնել կենսաբազմազանության վրա մարդու գործունեության վնասակար հետևանքները գնահատելու, կանխելու և վերացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև նպաստել բնապահպանական հիմնախնդիրները գիտակցող, պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:
- ✓ **Վերառարկայական.** ենթադրենք նախատեսվում է ուսումնական նախագիծն իրականացնել 9- րդ դասարանի «Հասարակագիտություն» առարկայի շրջանակում, ապա ուսումնական նախագծի թեման կարող է լինել օրինակ՝ **«Չինարի հիմնական դպրոցում բուժկետի բացակայությունը»**: Նշված թեմայի կամ դրան առնչվող այլ թեմաների առկայության բացակայությունը համապատասխան դասարանի առարկայական ծրագրում չպետք է սահմանափակի ուսուցչին և սովորողներին համապատասխան կարողունակություններին միտված ուսումնական նախագծեր իրականացնելուց: Տվյալ դեպքում իրականացվող աշխատանքը կնպաստի, որպեսզի սովորողները ձևավորեն հետազոտելու, ստացված տվյալները հավաքագրելու և վերլուծելու, դրանք համապատասխան թիրախները հասկանալի և գրավիչ ներկայացնելու, ինչպես նաև համագործակցելու,

[12] ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի (ապրիլի 30-ի 18-Լ, ապրիլի 30-ի 19-Լ և մայիսի 7-ի 28-Լ) հրամաններ https://escs.am/am/news/8621:

հաղորդակցվելու հմտություններ, ցուցաբերեն նախաձեռնողականություն և ստեղծագործելու կարողություններ:

Թվարկված բովանդակային ձևաչափերով ուսումնական նախագծային աշխատանքները կիրականացվեն գծապատկեր 3-ում ներկայացված քայլերի տրամաբանությամբ:

Խմբային աշխատանքի դեպքում հիմնահարցի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելիս խումբը կարող է բաժանվել ենթախմբերի: Ընդհանուր նպատակին հասնելու համար խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ, փոխանակում և վերլուծում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում են քայլեր, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց, կրում անհատական և խմբային պատասխանատվություն ուսումնառության արդյունքների համար:

Նախագծային ուսումնառության աշխատանքների ընթացքում սովորողների միջև, որպես կանոն, ձևավորվում է հանդուրժողականություն և փոխադարձ վստահություն, համատեղ աշխատանքի ընթացքում սկսում են ավելի լավ ճանաչել իրենց և իրենց ընկերներին: Ուսումնական նախագծերի շրջանակներում սովորողները համագործակցում են նաև իրենց ավագ ընկերների, մեծահասակների հետ: Համատեղ արդյունք գրանցելու համար մեկտեղվում են բոլորի ջանքերը, միավորվում են թե՛ սովորողները, թե՛ մանկավարժները, թե՛ ծնողներն ու համայնքի տարբեր ներկայացուցիչներ: Եվ, ամենակարևորը, աշխատանքի ավարտին սովորողներն ունենում են իրական, շոշափելի արդյունքներ:

Ուսումնական նախագծերն ապահովում են հիմնահարցերի՝ որոշակի տևական ժամանակահատվածում բազմակողմ և բազմաձև, համալիր և համապարփակ հետազոտություն, գործնական բնույթի աշխատանք, ինչն էլ նպաստում է սովորողների կողմից ուսումնական նյութի, բովանդակության առավել խորը յուրաց-

մանը, համապատասխան իրավիճակներին արդյունավետ ու պատշաճ արձագանքելու կարողությունների և հմտությունների զարգացմանը, ժամանակակից կյանքի մարտահրավերներին դիմակայելուն ուղղված արժեհամակարգի ձևավորմանը:

Ուսումնական նախագծի գնահատում

Վերևում արդեն նշել ենք, որ ուսումնական նախագիծը, ըստ տևողության, կարող է լինել *կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ*, ըստ մասնակցության ձևաչափի՝ *անհատական և խմբային*, ըստ բովանդակության՝ *որևէ առարկային վերաբերող, միջառարկայական և ինտեգրված*:

Պետք է հաշվի առնել նաև, որ ուսումնական նախագծի իրականացման ժամանակ կարևորվում են ինչպես ընթացիկ աշխատանքները, այնպես էլ արդյունքներն ու դրանց ներկայացումը, ուստի ցանկալի է, որ ուսումնական նախագծի նախապատրաստական փուլից սկսած մինչև ամփոփում և վերլուծություն, յուրաքանչյուր սովորող, ինչպես նաև նախագիծը ղեկավարող ուսուցիչները պարբերաբար գրառումներ կատարեն՝ ինքնագնահատման և գնահատման ժամանակ տվյալներն օգտագործելու նպատակով:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ գնահատման ձևերը ևս կարող են տարբեր լինել՝ մնացորդային գիտելիքները ստուգող ավանդական թեստերից մինչև կատարողականը գնահատող համապատասխան ձևեր:

Ուսումնական նախագիծը, դրա առանձին բաղադրիչը, համապատասխան ժամանակահատվածում սովորողների յուրացրածն ու ձեռքբերածը գնահատելու, անդրադարձ կամ ինքնաանդրադարձ կատարելու համար հաճախ կիրառվում են կատարողականի վրա հիմնված գնահատման տարատեսակ ձևեր:

Կատարողականի վրա հիմնված գնահատում և գնահատման ձևերը

Կատարողականի վրա հիմնված գնահատումը (նաև՝ կատարողականի գնահատում) սովորողի ձեռքբերումները ստուգելու այլընտրանքային մեթոդներից է: Մինչ ավանդական թեստավորումը/ստուգումը սովորողներից պահանջում էր ճիշտ պատասխանել հարցերին (հաճախ բազմակի ընտրության ձևով), կատարողականի գնահատումը սովորողներից պահանջում է ցուցադրել գիտելիքներ և հմտություններ, այդ թվում նաև իրենց առջև դրված խնդիրների լուծման գործընթացի վերաբերյալ:

Կատարողականի գնահատումը չափում է տարբեր ուսումնական առարկաների շրջանակներում գիտելիքը ինտեգրելու/տեղայնացնելու, խմբային աշխատանքին նպաստելու և նոր իրավիճակներում խնդիրների բախվելիս դրանց լուծման գործողությունների պլան մշակելու կարողությունը[13]:

Նախագծերի արդյունքում սովորողները հաճախ ստեղծում են հետևյալ արտադրանքները.

- պատմական էսսե, հետազոտական հոդված (անհատական աշխատանք),
- գիրք/գրքույկ (համանքի տարեցների հետ կազմակերպած հարցա/զրույցների հիման վրա պատմական որևէ կարևոր շրջանի մասին գործ),
- խմբային թատերական ներկայացում,
- բանավեճ ուսումնասիրված կարևոր հարցի շուրջ, որը վերաբերում է համայնքի կյանքին,
- ցուցադրություններ, օրինակ՝ նկարների կամ արվեստի գործերի ցուցադրում, ինքնուրույն ստեղծված ապրանքների ցուցադրություն (օր.՝ էկո պայուսակներ) համայնքային ծրագրի արդյունքում լուծված խնդրի

[13] Շարադրված է՝ ըստ https://www.projectappleseed.org/assessment կայքի (դիտված՝ 11.12.22):

ընթացքի մասին շնորհանդես (օր.՝ համայնքի մարզադաշտի մաքրման և կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ, սոցիալական կարևոր ուղերձով գրաֆիտի որևէ լքված շենքի պատին, իրազեկման պաստառներ),

- թվային ռեսուրսներ՝ կայք, տեսանյութ, վավերագրական ֆիլմ, բլոգ, թվապատում:

Նախագծային ուսումնառության ամփոփիչ գնահատումը սովորաբար տեղի է ունենում սովորողների՝ վերև նշված վերջնական արտադրանքների և/կամ գիտելիքների ու հմտության ցուցադրության/ներկայացումների ձևով:

Չափանիշները, որոնց համար սովորողները կգնահատվեն, պետք է վերջիններիս հետ համատեղ սահմանվեն և վերանայվեն յուրաքանչյուր նախագծի պլանավորման սկզբում: **Գնահատման սանդղակաշարերը** թույլ են տալիս սովորողներին ի սկզբանե հասկանալ և պատկերացնել, թե իդեալական վերջնարդյունքն ինչպիսին պետք է լինի և օգնում է նրանց ճիշտ պլանավորել դեպի ակնկալվող արդյունքն առաջնորդող գործողությունների ուղին և իրականացման ժամանակացույցը: Մինչ սովորողները գնում են այդ ճանապարհով, ձևավորող/նկարագրական ընթացիկ գնահատումները և կանոնավոր ստուգումները կօգնեն նրանց շարժվել ճիշտ ուղղությամբ, ժամանակին նկատել շեղումները և շտկել դրանք:

Կատարողականի գնահատման օրինակները ներառում են.

- ***խմբային նախագծերի արդյունքների ներկայացում,*** որը թույլ է տալիս մի խումբ սովորողների միասին աշխատել բարդ խնդրի վրա, որը պահանջում է պլանավորում, հետազոտություն, ներքին քննարկում և խմբային ներկայացում:

- ***Փորձեր՝*** ստուգելու, թե որքանով են սովորողները հասկանում գիտական հասկացությունները և թե ինչ չափով են կարողանում կիրառել դրանք գործնական աշխատանքներ կատարելիս:
- ***Ցուցադրությունները և շնորհանդեսները*** սովորողներին հնարավորություն են տալիս ցուցադրելու, թե որքանով են տիրապետում առարկայական ոլորտի բովանդակությանը և ընթացակարգերին:
- ***Էսսե, գնահատման գրավոր ձև***, որով չափվում է սովորողի՝ առարկայի ընկալումը գրավոր նկարագրության, վերլուծության, բացատրության կամ ամփոփման միջոցով:
- ***Պորտֆոլիոներ/ուսումնական թղթապանակներ***, որոնք թույլ են տալիս սովորողներին ներկայացնելու իրենց աշխատանքի ընդհանուր պատկերը՝ ժամանակի ընթացքում ստեղծված աշխատանքների հավաքածուներ պարունակող փաստաթղթերի միջոցով:

Կատարողականի գնահատման կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սովորողներից պահանջվում է ակտիվ մասնակցություն՝ ուշադրություն դարձնելով սովորողների՝ իրենց առջև դրված խնդիրների լուծման ձևերին, դրանց համապատասխան հմտություններին:

Ուսումնական նախագծի որևէ փուլ գնահատելիս հիմնականում օգտագործվում են սանդղակներ (ռուբրիկ)՝ որպես գնահատման գործիք, որոնցով չափվում է սովորողի՝ կրթական խնդրի հաղթահարման մակարդակը (անբավարար, բավարար, լավ, գերազանց):

Ուսումնական նախագծի գնահատման սանդղակի նմուշ-օրինակ [14]

Միավորներ / **Չափանիշներ**	1-3	4-6	7-8	9-10
Բովանդակություն	Ուսումնասիրությունները չեն առնչվում հիմնախնդրին: Բացակայում են նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությունը: Առկա են սխալներ:	Ուսումնասիրությունները մասամբ են առնչվում հիմնախնդրին: Նյութի շարադրանքն ինչ-որ չափով տրամաբանական է, սակայն առանձին հարցեր անհասկանալի են:	Ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին: Նյութի շարադրանքը տրամաբանական է, առանձին բաղկացուցիչ մասերը փոխլրացնում են իրար:	Ուսումնասիրությունները լիարժեք արտացոլում են հիմնարար հարցերը և Նախագծի բովանդակությունը հասկանալի է, տրամաբանորեն շարադրված ընկալելի:
Ինքնատիպություն	Նյութերը ներկայացվում են առանց որոշակի	Նյութերը ներկայացվում են միօրինակ: Առկա են	Նյութերը բազմազան են, ներկայացվում են	Նյութերը բազմազան են, ներկայացվում են

[14] Տե՛ս Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2004, էջ 232:

	մշակման, սահմանափակ քանակի միաբնույթ տեղեկատվական աղբյուրների հիման վրա:	տարբեր տեղեկատվական աղբյուրներ:	հետաքրքիր մոտեցմամբ: Առկա են հեղինակային գաղափարներ: Ներառված է մեծածավալ տեղեկատվություն տարբեր աղբյուրներից:	յուրօրինակ մոտեցմամբ: Աշխատանքն աչքի է ընկնում առանձնահատուկ գաղափարներով, տեղեկատվությունը հավաքագրված է տարաբնույթ աղբյուրներից, և ստեղծագործաբար վերլուծված է:
Մուլտիմեդիայի օգտագործում	Նյութերում բացակայում են մեդիա աղբյուրներ, մուլտիմեդիոն նյութեր, հղումներ:	Նյութերում օգտագործված են մեկ-երկու տեղեկատվության աղբյուր իրենց հղումներով, մեկ-երկու մուլտիմեդիոն նյութեր, որոնց ներկայացումը, սակայն, համակարգված	Նյութերում օգտագործված են մեդիա աղբյուրներ իրենց հղումներով, մեդիա նյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրա-նկարներ, նկարներ,	Նյութերում օգտագործված են մեդիա աղբյուրներ իրենց հղումներով, մեդիա նյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրա-նկարներ, նկարներ,

		չեն:	տեսանյութեր, ձայնա-գրություններ: Կիրառված մուլտիմեդիոն տարրերը ոչ միշտ են հասկանալի դարձնում հարցերի ընկալումը:	անիմացիաներ, տեսա-նյութեր, **վիճակագրական տվյալներ, սոց. հարցումներ** ձայնագրություններ: Մուլտիմեդիոն տարրերը ընդգծում են նյութի բովանդակային մասը և հասկանալի դարձնում բարդ հարցերի ընկալումը:
Ներկայացման բանավոր խոսք	Աշխատանքի արդյունքները ներկայացնում են ոչ հստակ: Խոսքը կցկտուր է, ոչ լիարժեք:	Ներկայացնում են աշխատանքի արդյունքները մասամբ, Մասամբ տիրապետում են ներկայացվող նյութին: Խոսքը սահուն է, սակայն բացակայում են	Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները: Թեմայի վերաբերյալ ներկայացնում են լրացուցիչ	Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովան-դակությունն ու հիմնական դրույթները: Նյութը ներկայացնում են լիարժեք և բազմակողմանի: Խոսքը

		հիմնավորումները:	տեղեկատվություն: Խոսքը սահուն է, համոզիչ, առկա են հույզեր:	սահուն է, համոզիչ, փաս-տարկված, պատկերավոր և հուզականորեն հագեցած:
Գրաֆիկական ձևավորում	Աշխատանքը ներկայացված է պարզ շարադրանքի տեսքով: Մեծ ուշադրություն է դարձվել ցուցադրական նյութերին, ինչը խանգարում է բովանդակության ընկալմանը:	Աշխատանքը ներկայաց-ված է շարադրանքի տեսքով, առկա են մեկ-երկու մեդիա նյութեր: Գրաֆիկական և մուլտիմեդիոն բաղադ-րիչները չեն խանգարում բովանդակության ընկալ-մանը, բայց ոչ միշտ են ճիշտ իրագործված, անհամաչափ են, չկա ընդհանուր ոճ:	Աշխատանքը ներկայացված է համակարգված, հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Ձևավորման և բովանդակային տարրերը լրացնում են միմյանց:	Աշխատանքը ներկայացված է համակարգված, մատչելի և հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Ձևավորման և բովանդակային տարրերը մանկավարժական տեսակետից կազմում են մեկ ամբողջություն:

Խմբային աշխատանք	Խմբում աշխատանքային պարտականությունները չեն բաժանվել և որոշ անդամներ ընդհանրապես չեն ընդգրկվել աշխատանքներին: Գործնականում խմբային աշխատանք չի իրականացվել:	Խմբի անդամների մեծ մասը մասնակցել է աշխատանքներին, բայց ծանրաբեռնվածությունը նրանց միջև անհավասարաչափ է բաշխվել:	Խմբի անդամների մեծ մասն իրենց ներդրումն ունեն ընդհանուր գործի մեջ:	Աշխատանքներին հավասարապես մասնակցել են խմբի բոլոր անդամները:
Ընդամենը				

Էսսեն որպես գնահատման, ինքնագնահատման և անդրադարձի ձև

Էսսեն ոչ մեծ ծավալի արձակ ստեղծագործություն է, արտահայտում է կոնկրետ առիթի կամ հարցի առնչվող տեսակետներ: Էսսեի նպատակն է շարադրանքի միջոցով հստակ և ճիշտ ձևակերպել մտքերը, համակարգել տեղեկատվությունը, օգտագործել վերլուծության հիմնական ձևերը, բացահայտել պատճառահետևանքային կապերը, փաստարկել եզրակացությունները: Էսսեն կարող է լինել ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ առկա վիճակագրական տվյալների վերլուծություն, զանգվածային լրատվամիջոցների նյութերի վերլուծություն և ուսումնասիրվող մոդելների օգտագործում, խնդիրը լուսաբանող օրինակների ընտրություն և մանրամասն վերլուծություն:

Քանի որ ուսումնական նախագծային աշխատանքներն ունեն քայլերի հստակ հաջորդականություն՝ հիմնախնդրի ձևակերպում և հիմնավորում, հետազոտական հարցերի առաջադրում, ուսումնասիրություններ և հիմնախնդրի լուծմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակում և առաջարկի ներկայացում, ապա սովորողների կողմից ներկայացվող անհատական էսսեները կարող են հստակ պատկերացում տալ, թե որքանով են նրանք տեղյակ ուսումնական նախագծի ամբողջական պատկերից՝ անկախ նրանից, թե աշխատանքի բաժանման ժամանակ տվյալ սովորողն ինչ դերակատարում է ունեցել, որ խմբում/ենթախմբում է աշխատել:

Էսսե գրելու որոշ չափանիշներ

Էսսեն շարադրելիս անհրաժեշտ է լավ պատկերացնել լուսաբանվող թեման, հստակ և տրամաբանական հաջորդականությամբ շարադրել մտքերը, օգտագործել փաստերն առանց խեղաթյուրելու, կատարել վերլուծություններ և եզրակացություն, օգտագործել համապատասխան բառապաշար, հետևել գրական լեզվի քերականական և ոճաբանական կանոններին:

Էսսեն շարադրելիս և ցանկացած պնդում դիտարկելիս անհրաժեշտ է պատասխանել երեք կարևոր հարցի՝ *ինչ, ինչպե՞ս, ինչո՞ւ:*

«Ի՞նչ»

Առաջին հարցը, որ առաջանում է ընթերցողի մոտ, «ի՞նչ» հարցն է: Այս հարցի հիմնավորումը ցուցադրում է՝ արդյոք էսսեում արտացոլված միտքը ճշմարի՞տ է: Պատասխանելով այդ հարցին՝ հեղինակն ուսումնասիրում է ապացույցներ՝ ներկայացնելով սեփական տեսակետը: «Ի՞նչ» բաժինը էսսեում արտացոլվում է հաճախ անմիջապես ներածությունից հետո:

Քանի որ հեղինակը ներկայացնում է իր դիտարկումները, այս հատվածն այն բաժինն է, որտեղ նա թեմայի վերաբերյալ առավելագույն ասելիք է ապահովում: Սակայն «ի՞նչ» հարցի բացահայտումը չպետք է ընդհանուր էսսեի երկու երրորդից ավելին լինի, այլապես էսսեն կկորցնի իր հավասարակշռությունը՝ դառնալով միայն եզրակացություն կամ նկարագրություն:

«Ինչպե՞ս»

Ընթերցողը ցանկանում է իմանալ՝ արդյոք էսսեում արծարծված հարցերն ու տեսակետները ճշմարի՞տ են բոլոր պարագաներում: Հեղինակը, պատասխանելով «ինչպե՞ս» հարցին, հիմնավորում է իր տեսակետը: Ինչպե՞ս կարող է նյութի ներկայացումը նոր մոտեցում լինել ապացույցների դիտարկման համար, այլ աղբյուրներն ինչպե՞ս կարող են ազդել այն պնդումների վրա, որ կատարում է հեղինակը: Սովորաբար «ինչպե՞ս» հարցին պատասխանող հատվածը հաջորդում է «ի՞նչ» պատասխանը պարունակող հատվածին:

«Ինչու՞»

Ընթերցողը պետք է իմանա նաև, թե թեմայի վերաբերյալ հեղինակի մեկնաբանություններն ինչու պետք է հետաքրքրեն իրեն: Դա թույլ կտա հասկանալու հեղինակի շարադրանքն ավելի մեծ համատեքստում: Պատասխանելով «ինչու՞» հարցին՝ հեղինակը շարադրանքի միջոցով կբացահայտի էսսեի նշանակությունը: Այս հարցի լիարժեք պատասխանը կնշանակի էսսեի ավարտ: Եթե հեղինակը

չպատասխանի այդ հարցին, ապա ընթերցողն էսսեն կընկալի որպես անավարտ և անիմաստ շարադրանք[15]:

Էսսեի կառուցվածքը

Մուտք (ներածություն/նախաբան)

Այս հատվածն ընթերցողի մեջ պետք է հուզական վերաբերմունք առաջացնի, առաջ բերի հետաքրքրություն արծարծված հարցի նկատմամբ՝ մղելով նրան կարդալու տեքստն ամբողջությամբ:

Հիմնական մաս

Այս հատվածում հեղինակն առաջ է քաշում պնդումներ, հիմնավորում դրանք՝ ապացուցելով իր տեսակետի ճշմարտացիությունը:

Եզրակացություն

Հիմնական մասում շարադրելով ասելիքը՝ հեղինակը կատարում է եզրակացություն[16]:

Էսսեի կառուցվածքի բաղադրիչների նկարագրություն

Դասական էսսեն ունի հստակ կառուցվածք[17]: **Այն կազմված է ներածությունից, հիմնական մասից և եզրակացությունից կամ ամփոփումից:** Ստորև մանրամասն նկարագրված է այդ բաղադրիչներից յուրաքանչյուրի բովանդակությունը:

---

[15] Տե՛ս Մեթոդական ձեռնարկ «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների համար, Կոնրադ Ադենաուր Հիմնադրամ, Երևան, 2020:

[16] Էսսեի կառուցվածքի բաղադրիչների, դրանց նկարագրության մասին ավելի մանրամասն տե՛ս *Հավելված 8-ում:*

[17] Մանրամասն տե՛ս Մեթոդական ձեռնարկ «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների համար, Կոնրադ Ադենաուր Հիմնադրամ, Երևան, 2020:

Ներածություն

Էսսեի շարադրանքն անհրաժեշտ է սկսել ընթերցողի ուշադրության գրավմամբ: Այն ակնհայտորեն կամ ոչ ակնհայտորեն հաղորդում է աշխատանքի նպատակի մասին:

Ահա կենդանի հետաքրքություն առաջացնելու մի քանի գործուն խորհուրդ.

- **հետաքրքիր (զարմացնող) տեղեկատվություն:** Այս տեղեկատվությունը պետք է ճշմարիտ և հավաստի լինի և չպետք է ընթերցողի համար լիովին նորը լինի. այն կարող է պարզապես համապատասխան փաստ լինել, որը կարող է հստակորեն արտացոլել հեղինակի ներկայացվելիք տեսակետը: Եթե հեղինակն օգտագործում է փոքրիկ ապշեցնող տեղեկատվություն կամ պատմություն, անհրաժեշտ է դրան ավելացնել մեկ-երկու նախադասություն:
- **Անեկդոտ:** Անեկդոտը պատմություն է, որը ցուցադրում է հեղինակի տեսակետը: Այն պետք է կարճ և դիպուկ լինի, տեքստին համապատասխան: Անեկդոտի օգտագործումը շատ արդյունավետ կարող է լինել, սակայն այն պետք է զգուշորեն և տեղին կիրառել:
- **Երկխոսություն:** Համապատասխան երկխոսությունը չպետք է բացահայտի կողմերին, բայց ընթերցողը պետք է հասկանա, թե ինչ է հեղինակը փորձում փոխանցել: Երկխոսությունը կարող է բաղկացած լինել զրուցակիցների միջև փոխանակվող երկու-երեք նախադասությունից:
- **Ամփոփող տեղեկատվություն:** Վերջում ավելացվում է մեկ-երկու ընդհանուր նախադասություն, որն ընթերցողին մոտեցնում է հիմնական գաղափարին: Յուրաքանչյուր հաջորդ նախադասություն պետք է ավելի կոնկրետ լինի՝ քայլ առ քայլ բացահայտելով արծարծվող թեման:

Այս հատվածն ավարտվում է թեզի ամրապնդմամբ:

Հիմնական մաս

Թեման, որն ընտրվել է, պետք է նկարագրվի, բացատրվի և հիմնավորվի փաստերով:

Հիմնական մասը թեմայի հետևողական շարադրանքն է: Այն ներկայացնում է հեղինակի տեսակետը, հայացքները, պատկերացումները, փաստարկներով և օրինակներով ամրապնդում է յուրաքանչյուր գաղափար՝ հիմնված սեփական փորձի, պատմության, գեղարվեստական գրականության օրինակների վրա: Պարունակում է վկայություններ և հղումներ, մեջբերումներ հայտնի մարդկանց մտքերից: Հիմնական մասը էսսեի ամենածավալուն հատվածն է: Այս մասում ընդգրկված ամեն մի գաղափար դառնում է մի ենթակետ. եթե հեղինակը երկու-երեք հիմնական գաղափար ունի, դրանք շարադրանքում դառնում են երկու-երեք պարբերություն:

Հիմնական մասի յուրաքանչյուր պարբերություն պետք է նույն կառուցվածքն ունենա:

Հիմնական մասի շարադրման ընդունված փարբերակ է հետևյալ կառուցվածքը: Ցանկալի է հետևել տվյալ կառուցվածքին, կիրառել առաջարկվող բառերն ու արտահայտությունները.

ՊՆԴՈՒՄ

Ես կարծում եմ, որ ...

Իմ կարծիքով ...

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Որովհետև ...

Քանի որ ...

Դա է պատճառը, որ ...

Այդ իսկ պատճառով ...

ՕՐԻՆԱԿ

Օրինակ՝ ...

Այսպես՝ ...

Դիցուք՝ ...

Պատկերացնենք՝ ...

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այդպիսով ...
Ամփոփելով ...
Ի մի բերելով ասվածը՝ ...
Եզրակացնելով ...
Գալով եզրահանգման՝ .. .
Ամբողջացնելով վերը շարադրվածը՝ ...

Եզրակացություն.

Եզրակացություն կատարելու համար անհրաժեշտ է մեկ-երկու ազդեցիկ նախադասություն, որոնք որոշակի կառուցվածք կամ ձև չունեն. պարզապես հեղինակը վերանայում է իր շարադրած մտքերը, որպեսզի տեսակետի վերաբերյալ ձևակերպումները ճիշտ լինեն, կարելի է նաև հակիրճ շարադրել սեփական զգացողությունները թեմայի վերաբերյալ: Անգամ անեկդոտը կարող է դառնալ արդյունավետ ամփոփում: **Եզրակացության մեջ նոր միտք կամ տեղեկատվություն չպետք է հնչի, միայն արդեն արծարծված մտքերի վերաբերյալ հեղինակի վերջնական տեսակետն ու ամփոփիչ խոսքը**: Ներածությունն ու եզրակացությունն ամփոփում են էսսեի հիմնական մասը: Բայց դրանով աշխատանքը դեռ չի ավարտվում: Մեկ քայլ է մնում այն ավարտելու համար: Եվ այդ վերջին քայլն աշխատանքի վերանայումն է: Հնարավորության դեպքում, ցանկալի է, աշխատանքն ընդմիջել մեկ-երկու օրով կամ խնդրել ընկերներին, ընտանիքի անդամներին և այլոց կարդան ձեր աշխատանքը, լսել նրանց դիտողություններն ու առաջարկությունները: Վերանայում նշանակում է տեքստի խմբագրում, որի նպատակը շարադրանքի որակը, մտքերի հստակությունը,

ըմբռնելիությունը, տրամաբանական կապը, գրագիտությունը ստուգելն է: Էսսեն ավելի հեշտությամբ և արագ կընթերցվի, եթե մտքերը շարադրված են փոքրիկ պարբերություններով, նախադասությունները երկարաշունչ չեն, պարզ են շարադրված, առանց անհասկանալի եզրույթների, դժվարընկալելի բառերի և արտահայտությունների: Շատ կարևոր է նաև էսսեի արտաքին գեղեցիկ տեսքն ապահովելը: Եթե այն կոկիկ է և գրավիչ, ապա առաջին տպավորությունը դրական կլինի:

Էսսեի գնահատման սանդղակի նմուշ-օրինակ [18]

	3	2	1	0	Միավոր
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **Համատեքստ/պատմություն** **Խնդիրի ձևակերպում/** **Թեզի սահմանում** **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**	Լավ մշակված ներածական պարբերությունը պարունակում է մանրամասն նախապատմություն, խնդրի հստակ բացատրություն կամ ձևակերպում և թեզի սահմանում: Եզրակացությունն ամփոփում է հիմնական թեմաները՝ առանց նախորդ նախադասությունները կրկնելու. գրողի կար-	Ներածական պարբերությունը պարունակում է որոշ հիմնական տեղեկություններ և նշում է խնդիրը, բայց չի բացատրում մանրամասների միջոցով: Ուրվագծում է հոդվածի թեզը: Եզրակացությունն ամփոփում է հիմնական թեմաները: Փոփոխության որոշ առաջարկներ ակնհայտ են:	Ներածությունում նշվում է թեզը, բայց համարժեքորեն չի բացատրում խնդրի նախապատմությունը: Խնդիրը նշված է, բայց զուրկ է մանրամասնությունից: Եզրակացությունն ամփոփում է հիմնական թեմաները:	Թեզը և/կամ խնդիրը անորոշ է կամ անհասկանալի: Հմատեքստային մանրամասները թվացյալ պատահական տեղեկատվության հավաքածու են՝ անհասկանալի կամ թեմային չառնչվող: Եզրակացությունը պատշաճ կերպով չի ամփոփում հիմնական կետերը: Փոփոխության առա-	

[18] Rubric for Assessment of the Agrumemntative Essay, https://pier.macmillan.yale.edu/sites/default/files/files/Argumentative%20essay%20rubric.pdf :

	ծիքներն ու փոփոխության առաջարկները տրամաբանական են և լավ մտածված:			ջարկներ կամ կարծիքներ ներառված չեն:	
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ Պարբերություններ Հերքում/հակառակ տեսակետ	Երեք կամ ավելի հիմնական կետերը լավ մշակված են լրացուցիչ մանրամասներով: Հերքման պարբերություն(ներ)ը ընդունում է հակառակ տեսակետը և ամփոփում դրանց հիմնական կետերը:	Առկա են երեք կամ ավելի հիմնական կետեր, բայց կարող են զուրկ լինել մանրամասնության և զարգացման մեկ կամ երկուսի մեջ: Հերքման պարբերություն(ներ)ը ընդունում է հակառակ տեսակետը, բայց չի ամփոփում կետերը:	Երեք կամ ավելի հիմնական կետեր, բայց բոլորը զուրկ են զարգացումից: Հերքման պարբերություն(ներ)ը բացակայում է և/կամ անորոշ:	Երեք հիմնական կետից պակաս՝ գաղափարների վատ զարգացմամբ: Հերքումը բացակայում է կամ անորոշ:	
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	Էսսեում մտքերի տրամաբանական, համոզիչ զարգացում: Հստակ կառուցվածք,	Ընդհանուր առմամբ փաստաթուղթը տրամաբանորեն մշակված է: Էսսեի մեջ գաղա-	Էսսեում գաղափարների առաջընթացն անհարմար է, սակայն ընթերցողին	Էսսեի դասավորությունը անհասկանալի է և անտրամաբանական: Էսսեում բացա-	

	որն ամրապնդում և ցուցադրում է կենտրոնական գաղափարը կամ թեման և ընթերցողին տեղափոխում տեքստի միջով: Կառուցվածքը այնքան հարթ է հոսում, որ ընթերցողը գրեթե չի մտածում դրա մասին: Արդյունավետ, հասուն, նրբագեղ անցումներ կան ամբողջ էսսեում:	փարների առաջընթացն իմաստ ունի և հեշտությամբ շարժում է ընթերցողին տեքստի միջով: Ուժեղ անցումներ կան ամբողջ ընթացքում և ավելացնում են էսսեի համախմբվածությունը:	տեղափոխում է տեքստի միջով առանց ավելորդ շփոթության: Գրողը երբեմն շատ արագ է նետվում առաջ կամ չափազանց շատ ժամանակ է ծախսում այն մանրամասների վրա, որոնք նշանակություն չունեն: Անցումներն ի հայտ են գալիս ժամանակ առ ժամանակ, բայց ոչ հավասարապես ողջ շարադրանքի ընթացքում:	կայում է ուղղության հստակ զգացումը: Գաղափարները, մանրամասները կամ իրադարձությունները կարծես թե միաձուլված են անփույթ կամ պատահական ձևով. չկա ճանաչելի ներքին կառուցվածք, և ընթերցողները դժվարանում են հետևել գրողի մտքի գծին: Շարադրությունում քիչ են հարկադիր անցումներ, կամ չկան անցումներ:	

ՀՂՈՒՄՆԵՐ	Աղբյուրի նյութն ան-խափան կերպով ին-տեգրված է տեքստի մեջ: Բոլոր աղբյուրնե-րը ճիշտ ձևաչափով փաստաթղթավորված են ինչպես տեքստում, այնպես էլ մեջբերված աշխատանքներ էջում:	Օգտագործվում է սկզբնաղբյուրի նյութը: Բոլոր աղբյուրները ճշգրիտ փաստա-թղթավորված են, բայց մի քանիսը ցանկալի ձևաչափով չեն: Որոշ աղբյուրներ վստահելի չեն:	Օգտագործվում է աղբյուրի նյութը, սակայն ինտեգրումը կարող է անհարմար լինել: Բոլոր աղբյուրները ճշգրիտ փաստաթղթավորված են, բայց շատերը ցանկալի ձևաչափի մեջ չեն կամ վստահելի չեն:	Աղբյուրների բացակայություն և/կամ աղբյուրները ճշգրիտ փաստաթղթավորված չեն: Ձևաչափը սխալ է բոլոր աղբյուրների համար:	

ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչվող հասկացություններն առանցքային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորել տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքներն աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:

Դրանք պետք է մեծ ուշադրության արժանանան դպրոցի բոլոր աստիճաններում, բոլոր առարկաների ուսուցման ժամանակ:

Ընդհանրական հասկացությունների ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է առարկայի առանձնահատկությամբ, սակայն խաչվող հասկացություններից ոչ բոլորն են պարտադիր ուսումնական տվյալ առարկայի շրջանակում: Դրանք հարկ է կիրառել՝ ըստ թեմայի նպատակահարմարության՝ հաշվի առնելով հաղորդվող թեմայի յուրահատկությունը:

Սակայն, որպես ընդհանուր պահանջ, հարկ է, որ բոլոր առարկաներում խաչվող հասկացություններն ընտրվեն ու կիրառվեն իրական կյանքի հետ համադրման համատեքստում:

Հասարակագիտություն առարկայի դասավանդման շրջանակում առաջարկվում է անդրադառնալ ստորև թվարկված առանցքային գաղափարներին.

1. օրինաչափություն,
2. պատճառ և հետևանք,
3. կառուցվածք և գործառույթ,
4. համակարգ և մոդել,
5. կայունություն և փոփոխություն,
6. զարգացում,
7. անհատ և հարաբերություններ,

8. ժամանակ և տարածություն,
9. անհատական և մշակութային արժեհամակարգ,
10. համաշխարհայնացում:

Օրինաչափություն

- ✓ Երևույթների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող պատճառահետևանքային անհրաժեշտ կապեր, փոխադարձ պայմանավորվածություններ,
- ✓ որոշակի սկզբունքով կրկնվող երևույթներ հասարակության մեջ,
- ✓ մարդու գիտակցությունից դուրս և նրանից անկախ բնության ու հասարակության մեջ տեղի ունեցող օբյեկտիվ գործընթացների արտացոլում ճանաչողության մեջ և գիտելիքների որևէ բնագավառում,
- ✓ որևէ երևույթի պատմական զարգացման մեջ դրսևորվող (դրսևորված) օրենք և դրա հետևանքը կամ արդյունքը:

Պատճառ և հետևանք

- ✓ Յուրաքանչյուր երևույթի անհրաժեշտաբար մեկ այլ երևույթի նախորդումը,
- ✓ պատճառահետևանքային փոխազդեցություններ,
- ✓ պատճառահետևանքային կապերի ուսումնասիրում՝ նոր իրադարձությունները կանխատեսելու և բացատրելու համար:

Կառուցվածք և գործառույթ

- ✓ Գործառույթը կառուցվածքից բխող գործունեություն է: Փոխվում է կառուցվածքը, փոխվում են նաև դրանից բխող գործառույթները, կառուցվածքով են պայմանավորված շատ գործառույթներ:
- ✓ Կառուցվածքի և գործառույթների կապերի ուսումնասիրությունը սկսվում է ցածր դասարաններում՝ բնության մեջ հանդիպող և մարդու կողմից ստեղծված պարզ համակարգերի ուսումնասիրմամբ:

Համակարգ և մոդել

- ✓ Համակարգը միմյանց հետ հարաբերություններ կամ որոշակի կապեր ունեցող տարրերի բազմություն է, որոնք միասին կազմում են որոշակի ամբողջություն:
- ✓ Համակարգի միջոցով սովորողն ունենում է ընդհանրական պատկերացում՝ նմանություններ ունեցող երևույթների մասին:
- ✓ Մոդելները համակարգի պարզեցված տարբերակներն են: Համակարգը՝ որպես օբյեկտ, հանդես է գալիս միայն իր տարրերով և դրանց անկրկնելի ու եզակի փոխազդեցությամբ:

Կայունություն և փոփոխություն

- ✓ Կայունությունն ու փոփոխությունը բոլոր համակարգերի բնութագրիչներն են: Համակարգերը կայուն են, երբ բոլոր մուտքերն ու ելքերը հավասարակշռված են, որպեսզի ներքին գործընթացները կարողանան շարունակվել կայուն վիճակում:
- ✓ Փոփոխություն՝ տեղի է ունենում, երբ մուտքերն ու ելքերը հավասարակշռված չեն, այդ դեպքում առաջանում է կայունության փոփոխություն:
- ✓ Փոփոխությունը կարող է գրանցել առաջընթաց կամ հետընթաց:
- ✓ Զարգացումն այնպիսի փոփոխություն է, որի հետևանքով առաջանում է որակական նոր առաջադիմական վիճակ:

Զարգացում

- ✓ Զարգացումը շարժման բարձրագույն տեսակ է, բնորոշվում է պարզից բարդ օրինաչափ անցումով:

Անհատ և հարաբերություններ

- ✓ Անհատի կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում:
- ✓ Անհատն այն մարդն է, որը բնութագրվում է տարբերիչ, միայն իրեն հատուկ հատկանիշների համալիրով, որն ակտիվորեն ճանաչում և վերափոխում է իրականությունը, իր ուրույն ներդրումն ունի հասարակության զարգացման առաջընթացում, հաջողությամբ դրսևորվում է գործունեության տարբեր ոլորտներում:

Ժամանակ և տարածություն

- ✓ Տարածությունն ու ժամանակը՝ որպես գոյության հիմնական բնութագրիչներ:
- ✓ Գոյությունը լիարժեք ընկալելու համար անհրաժեշտ է «մոտենալ» տարածությանը և ժամանակին/ տարբեր մարդկանց կենցաղի, նրանց պատմությունների, ճանապարհորդությունների, մարդկության պատմության շրջադարձային կետերի, հայտնագործությունների, գյուտերի, տեսանկյունից:

Անհատական և մշակութային արժեհամակարգ

- ✓ Գաղափարների, համոզմունքների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում,
- ✓ միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում:

Համաշխարհայնացում

- ✓ Տնտեսական, քաղաքական, մշակութային համաշխարհային քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլ, միասնական աշխարհի կայացման օբյեկտիվ գործընթաց,
- ✓ մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածություն, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերություններ, հնա-

րավորություններ, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա:

Ուսուցչի համար

Վերլուծում ենք մեդիան:

Հետազոտական աշխատանքներն իրականացնելիս սովորողները պետք է կարողանան քննադատաբար օգտվել մեդիայից, ծանոթ լինեն նաև ԶԼՄ-ների օգտագործած մանիպուլյացիոն հնարքների տեսակներին:

Հասկացությունների բառարան

Քարոզչություն - տեղեկություն, որը նպատակ ունի որոշակի կարծիք, դրական կամ բացասական վերաբերմունք ստեղծել որևէ անձի կամ երևույթի նկատմամբ:

Միակողմանի տեղեկատվություն - իրադարձության, խնդրի լուսաբանում միայն կողմերից մեկի ներկայացմամբ կամ մեկնաբանությամբ:

Թաքնված գովազդ - կազմակերպության կամ անձի գովաբանում, որը ներկայացվում է ոչ թե որպես գովազդ, այլ պարզապես լուր, տեղեկատվություն: Թաքնված գովազդի համար ԶԼՄ-ն վճարվում է, բայց այդ մասին չի տեղեկացնում սպառողին ու միտումնավոր կերպով մոլորեցնում է նրան:

Թյուր վերնագիր - վերնագիր, որ նպատակ ունի գրավել ընթերցողին, բայց բուն նյութին չի համապատասխանում:

Քննադատական մոտեցում մեդիային

Երբ մեծ-մեծ տառերով վերնագրված ու աչքի զարնող ձևավորմամբ հոդվածում ցնցող բացահայտումներ եք կարդում, մի շտապեք անմիջապես հավատալ ու պատմել մյուսներին: Ստուգեք. արդյոք նշվա՞ծ են տեղեկատվության աղբյուրները, արդյոք այն, ինչ կարդում եք, փա՞ստ է, թե՞ զուտ լրագրողի կարծիքը,

ո՞վ է հաղորդել տեղեկությունը, և ի՞նչ միտում կարող էր նա ունենալ… Այս հարցերի պատասխանները գտնելուց, այլ լրատվամիջոցներով նույն լուրը ստուգելուց հետո միայն կարելի է հետևություններ անել:

Քննադատաբար մոտենալ մեդիային՝ նշանակում է ևս մեկ անգամ մտածել այն ամենի մասին, ինչ տեսնում, լսում ու կարդում ենք լրատվամիջոցներում: Այսինքն՝ քննադատորեն ընկալել ցանկացած մեդիա տեքստ: Մեդիա տեքստ ասելով՝ մենք հասկանում ենք ոչ միայն գրավոր շարադրանք, այլ նաև՝ ձայնագրություն, հեռուստատեսային հաղորդագրություն, գովազդ, երգ, ֆիլմ և այլն: Մեդիա տեքստը կարող է միաժամանակ պարունակել մի քանի մեդիա լեզուներ ու ժանրեր՝ տեսողական, ձայնային, գրավոր:

Ցանկացած մեդիա տեքստ ունի նպատակ և գործառույթ՝ տեղեկացնել, զվարճացնել, ծիծաղեցնել, հիասթափեցնել, ուշադրություն գրավել, համոզել, որևէ բան վաճառել:

Ցանկացած մեդիա տեքստ ներկայացնում է իրականության մի տարբերակ, այլ ոչ ամբողջական իրականությունը: Լրատվամիջոցն ամենամեծ ցանկության դեպքում անգամ չի կարող փոխանցել 100 տոկոսանոց իրականությունը, քանի որ մեդիա տեքստ դառնալիս նյութը մշակվում է, և հեռուստադիտողն այն տեսնում է լրագրողի, ռեժիսորի, օպերատորի, խմբագրի, տեսախցիկի դիտանկյունից:

Ըստ քննադատական մտածողության տեսաբան Դեյվիդ Քլուսթերի՝ քննադատաբար մտածել՝ նշանակում է անկախ մտածել:

Ինֆորմացիան քննադատական մտածողության սկզբնակետն է, ոչ թե եզրակետը:

Քննադատական մտածողությունը սկսվում է հարցերից ու խնդիրներից, որոնք լուծում են պահանջում: Քննադատական մտածողությունը ենթադրում է պատճառաբանված փաստարկներ:

Ի՞նչ անել, երբ մատուցվող տեղեկությունը միակողմանի է կամ ստացված է կասկածելի աղբյուրից: Տեղեկությունը կարելի է ստուգել մեկ այլ լրատվամիջոցում,

ապա համադրել տարբեր մեդիաների հաղորդած տեղեկությունները և փորձել հասկանալ իրականությունը:

Ցանկացած նյութ կարդալիս, դիտելիս պետք է քննադատաբար մոտենալ. ո՞ր մեդիայով է այն տարածվում, ի՞նչ ուղղվածություն, շահեր ունի այդ մեդիան, ինչի՞ համար է այդ տեղեկությունը, օգտագործվա՞ծ է երաժշտություն, ի՞նչ լրացուցիչ հույզեր է առաջացնում երաժշտությունը, ի՞նչ կադրեր են օգտագործված, հայտնի՞ են տեղեկատվության աղբյուրները, քանի՞ աղբյուրից է ճշտված տեղեկությունը, կա՞ն հավաստի փաստեր, արդյոք միակողմանի՞ է ներկայացված տեղեկությունը:

Նպատակին հասնելու համար մեդիան կիրառում է որոշակի հնարքներ: Դրանք կարող են լինել.

- ընդհանրացում («բոլորն օգտագործում են…», «մասնագետները խորհուրդ են տալիս…»)
- համեմատություն («ձեր ատամները ձվի կեղևի պես ամուր կլինեն…»)
- անձնավորում (անվանական գովազդ՝ հասցեագրված հենց քեզ)
- զգացմունքայնություն (հիասթափություն, ոգևորություն, ժպիտ, լաց…)
- հանրաճանաչ մարդկանց ներգրավում (երբ աստղերն են ներգրավվում ու փոխանցում հաղորդագրությունը):

Մեդիան կարող է նաև միտումնավոր շրջանառել որևէ թեմա՝ հասարակության ուշադրությունը գրավելու, թեման կարևորելու, հասարակական շարժ, ակտիվություն արթնացնելու կամ ինչ-որ խնդրի լուծում տալու համար: Մեդիայի միջոցով հնարավոր է նաև ուշադրությունը շեղել, օրինակ՝ եթե իշխանությունը քայլեր է ձեռնարկում, որոնք անընդունելի կարող են լինել հասարակության համար, նրան ձեռնտու է մեդիայի միջոցով մարդկանց «զբաղեցնել», ասենք, պատերազմի, մշակութային որևէ իրադարձության կամ մեկ այլ թեմայով: Միշտ չէ, որ լրատվամիջոցները դիտավորյալ են ընտրում այս հնարքները. հաճախ պաշտոնյաներն իրենց հարցազրույցներով, մամուլի

ասուլիսներով լրատվամիջոցներին հրամցնում են իրենց ձեռնտու թեմաները, որոնք հետո հայտնվում են եթերում կամ պարբերականների էջերին:

Մանիպուլյացիոն հնարքների ակտիվ կիրառությունն ակնհայտ է դառնում գովազդում:

Երբ էկրանին հայտնված երջանիկ դեմքով գեղեցկուհին շրջում է գլուխն՝ ի ցույց դնելով X շամպունով լվացված չքնաղ մազերը, մի՛ շտապեք հաջորդ օրն իսկ գնել այդ ապրանքը՝ վստահ, որ ձեր մազերն էլ կդառնան գովազի հերոսուհու վարսերի պես փայլուն ու գեղեցիկ: Հավանաբար նրա վարսերը բավական երկար խնամվել են տարբեր միջոցներով, իսկ նկարահանումից հետո նաև համակարգչային մշակման են ենթարկվել ձեզ համոզելու համար:

Քննադատաբար վերաբերվե՛ք հոլովակին, ինչպես նաև մեդիայի որևէ տեսակով փոխանցվող տեղեկությանը. կասկածե՛ք, փորձե՛ք վերլուծել ու ստուգել ինֆորմացիան:

Հիշե՛ք. մեդիան իրականության վերապատկերում է, ունի օրիգինալ փաթեթավորում, գործում է հեղինակի անհատական ընկալման միջոցով, ունի նպատակ, որոշակի լսարան, ներառում է արվեստի ժանրեր՝ պատմվածք, նկարի վերարտադրություն, երաժշտություն, ֆիլմ, սերիալ, զվարճալի շոուներ, մարզական խաղեր: Այն բիզնես է, որը պայմանավորված է գովազդով, որն իր հերթին պայմանավորված է վարկանիշով:

Հարցակենտրոն կրթություն

Հարցակենտրոն կրթությունն օգտագործում է հասարակական հիմնախնդիրներն ուսումնասիրելու նպատակով: Սա յուրահատուկ մոտեցում է ուսուցման–ուսումնառության գործընթացին, քանի որ նպատակը ոչ թե ճշգրիտ պատասխաններ գտնելն է, այլ աշակերտներին ցույց տալ, թե որքանով է կարևոր հանրության համար էական հարցերը հետազոտելու և հասարակական խնդիրներին

առնչվող առավել կշռադատված որոշումներ կայացնելու հմտությունների զարգացումը:

Հարցակենտրոն մոտեցումն ընդգծում է մնայուն և կարևոր հասարակական խնդիրների ուսումնասիրության միջոցով հասարակական գիտելիքներ ու փորձ ձեռք բերելու կարևորությունը: Այն պահանջում է փաստերի, արժեքների և որոշումների վերլուծություն ու գնահատում:

Հարցակենտրոն ուսուցումն ինքնին մանկավարժական, կրթական մի նոր մոտեցում ու համոզմունք է, որը միանգամայն տարբերվում է պատմական ու աշխարհագրական տվյալների, տարեթվերի ու տեղանունների, դասագրքերի ու աղյուսակների վրա հիմնված և դասախոսության մեթոդով ուսուցանվող ավանդական մոտեցումից:

Հարցակենտրոն ուսումնական ծրագիր մշակելիս կարելի է առաջնորդվել հետևյալ հայեցակարգերով կամ սկզբունքներով.

- հիմնական ժողովրդավարական արժեքները (ինչպիսիք են ազատությունը, հավասարությունը, արդարությունը և այլն),
- գիտելիքի բնույթը (միջառարկայական կապեր հասարակագիտական և հումանիտար առարկաների համապատասխան թեմաների շուրջ),
- աշակերտների և յուրացման բնույթը (աշակերտների մտավոր ու մշակութային զարգացումը, նրանց մշակութային ծագումը),
- հասարակության (տեղական և համընդհանուր) բնույթը ներառյալ հասարակական ողջ բազմազանությունը:

Չափանիշներ հարցակենտրոն բովանդակության ընտրության համար

Խնդիրների ընտրությունը

Հասարակագիտական առարկաների բովանդակությունն ընտրելու ավանդական միջոցներն այսօր արդեն անարդյունավետ են: Ուսումնական

ծրագրերի մշակման ավանդական մոտեցումները հիմնված են զուտ գիտելիքային առարկաների վրա:

Մասնագետները նշում են, որ մարդը սկսում է մտածել այն ժամանակ, երբ որևէ խնդրի առջև է կանգնում: Նա սկսում է ուսումնասիրել խնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ՝ փորձելով կանխատեսել և ստուգել դրանց հնարավոր տրամաբանական հետևանքները: Մտածելու ընթացքում մարդն օգտվում է տեղեկատվության մատչելի բոլոր աղբյուրներից՝ ներառյալ իր նախորդ կենսափորձը:

Հենց սա էլ կոչվում է ի հայտ եկող բովանդակություն: Սովորողի տեսանկյունից այս բովանդակությունն ի հայտ է գալիս կամ սկսում է գոյություն ունենալ, քանի որ դրա կարիքը կա:

Հասարակագիտական առարկաների բովանդակությանը ծանոթանալիս մանկավարժները նշանակալի տարբերություն կնկատեն ավանդական առարկայական բովանդակության և, այսպես կոչված, առաջացող, ի հայտ եկող բովանդակության միջև: Ահա այս նոր ձևավորված բովանդակությունն էլ սկսում է օգնել աշակերտին լուծել առօրյա կյանքում առաջացող խնդիրները:

Գաղտնիք չէ, որ շատ հաճախ դասագրքերում ընդգրկված ծրագրային նյութի բովանդակությունը տարբերվում է աշակերտներին հուզող հարցերից՝ կախված առարկայից:

Նյութի բովանդակության ընկալման խորությանը վերաբերող հիմնական հարցերն են. «Ուսումնական ծրագիրը խթանու՞մ, թե՞ կաղապարում է մարդկության առջև կանգնած տևական խնդիրների մասին դատողություններ անելը», «Բովանդակությունը և այն դասավանդող ուսուցիչները հնարավորություն տալի՞ս են աշակերտներին քննարկվող խնդիրը կամ հարցը կապել համապատասխան աղբյուրների հետ»:

Թեմայի համապատասխանությունն աշակերտների կյանքին և խնդիրներին պարտադիր է դարձնում դրա պարբերական քննարկումը հասարակագիտության

դասաժամերին: Այս դասընթացի շրջանակներում լրագրերից, թերթերից, ռադիոյից և հեռուստատեությունից վերցված ընթացիկ հաղորդումների և այլ նյութերի հետ միասին կարևորվում են նաև աշակերտների նախընտրած հաղորդումները և դիտարկումները:

Դասարանային միջավայր և քննարկում: Հակասական հարցերի քննարկման ամենաբարդ խնդիրներից է խմբի ներսում միաբանության և ներդաշնակության հասնելը, առանց որոնց հնարավոր չէ արդյունավետ լուծումներ գտնելը: Քննարկումը նրանց հնարավորություն է տալիս հստակեցնել և հետազոտել նյութը և միմյանց տեսակետները: Քննարկումը պետք է դիտարկել որպես հարցադրումների և ուսումնասիրության հնարավորություն և գնահատել, թե ինչպես է խումբը դրան համապատասխան անհրաժեշտ դաշտ ստեղծում:

Ուսուցչի դերը

Ուսուցիչը պետք է հանդես գա որպես խթանող՝ խնդիրներ բարձրացնի քննարկման համար, խրախուսի դրանց ուսումնասիրությունը, տեղեկատվական աղբյուրներ առաջարկի, հակադիր հարցեր բարձրացնի և խրախուսի աշակերտներին հիմնավորել իրենց բացահայտումները տրամաբանական բացատրություններով և փաստարկներով:

Մեր առաջարկած ռազմավարությունը կարելի է հարմարեցնել դասարանային պայմաններին: Առավել կանոնակարգված մոտեցում ցույց տալու դեպքում ուսուցիչը կարող է դասը խթանել վարժությամբ, ապա աշակերտներին կիրառման օրինակներ բերել՝ ժամանակակից խնդիրը համեմատելով մեկ կամ երկու համանման երևույթների հետ, աշակերտներին փորձնական հանձնարարություն տալ կիրառելու քննարկման քառակետ կանոնները մեկ կամ երկու նմանատիպ երևույթների նկատմամբ և դասն ավարտել արդյունքների քննարկմամբ: Այս ամենը

կարելի է կատարել մեկ դասաժամի ընթացքում: Քննարկման խնդրին կարելի է անդրադառնալ հետագայում, երբ դրա կարիքը զգացվի:

Այստեղ կարևոր է այն, որ դասընթացը սահմանափակումների չի ենթարկվում: Նախ՝ հետազոտությունները ցույց են տալիս, որ աշակերտի հետաքրքրությունը, արդյունավետությունը և ընկալումը նվազում են, երբ դասարանական միջավայրը փակ է և չափազանց խիստ: Երկրորդ՝ համադրական մտածողությունը բարձրակարգ մտավոր գործունեություն է, որի նկատմամբ կիրառելի չէ այնպիսի դասավանդումը, որը կիրառվում է պակաս «բարձրակարգ» մտավոր գործունեություն պահանջող հանձնարարությունների դեպքում:

Աշակերտներին ինքնուրույն մտածելու ունակության հասցնելու համար ուսուցիչը նախ՝ պետք է կիրառի կանոնակարգված դասավանդման մոդելը, ապա՝ նոր միայն անցնի խթանող դասավանդման մոդելին:

Որպես հարցակենտրոն ուսուցման ուսուցիչ պետք է հիմնախնդիրներ և հակասություններ փնտրեք ոչ միայն այլոց, այլև ձեր սեփական կարծքիների և արժեքների մեջ: Ուսոցչի դերը ոչ թե աշակերտներին պատասխանները ներկայացնելն է, այլ հարցերի ուսումնասիրությանը, լուծմանը և համապատասխան գործողությունների ձեռնարկման մղելը, ինչպես նաև այդ գործընթացը գիտամանկավարժական եղանակներով կազմակերպելը:

Հարցակենտրոն դասավանդման մոդելը

Քայլ 1. Խնդրի և դրա առանձնահատկությունների բացահայտում

Ենթադրվում է, որ աշակերտները գիտելիքներ ունեն և որոշակիորեն ծանոթ են խնդիրներին:

- Որոշեք կամ բացահայտեք ուսումնասիրության ենթակա խնդիրը կամ թեման: Ապա խնդիրը վերարտադրեք հարցերի տեսքով և ներկայացրեք այլընտրանքային տարբերակներով:

- Բացահայտեք խնդրի պատճառները, լուծման սահմանափակումները, ենթախնդիրները, ինչպես նաև խնդրի վրա ազդող պատմական և քաղաքական գործոնները:
- Մշակեք խնդրի գրաֆիկական պատկերն առավել ընդարձակ ընկալման հնարավորություն ստեղծելու և խնդրի տարբեր ասպեկտների միջև եղած կապերը՝ պատճառային, ժամանակագրական և այլն ցույց տալու համար:

<u>Քայլ 2. Աշակերտների կողմից ձեռք բերված նոր գիտելիքի և խնդրին առնչվող նոր տեղեկությունների միջև կապի ստեղծում</u>

- Աշակերտներին հնարավորություն տվեք ներկայացնել, թե ինչ գիտեն կամ կարծում են, որ գիտեն խնդրին առնչվող հարցերի կամ բնագավառի վերաբերյալ:
- Պարզեք, թե ինչ տվյալներ և աղբյուրներ են անհրաժեշտ բարձրացված հարցերին անդրադառնալու համար:
- Քննարկեք, թե տնտեսագիտական, քաղաքագիտական կամ այլ ոլորտի ինչ վերլուծական հայեցակարգեր են անհրաժեշտ խնդիրը լիարժեք հասկանալու համար:
- Հավաքեք և վերլուծեք անհրաժեշտ տվյալները:

<u>Քայլ 3. Խնդրի հստակեցում նոր տվյալների և գաղափարների հիման վրա</u>

- Հարցրեք աշակերտներին, թե քննարկվող խնդրի ընկալման ինչ նոր բացահայտումներ են կատարել տվյալներն ուսումնասիրելուց և այլընտրանքային տեսակետներն ընթերցելուց հետո:
- Հարցրեք նրանց, արդյոք հնարավո՞ր է նոր փաստացի և հայեցակարգային գիտելիքները կիրառելով վերաձևակերպել և վերանայել ենթախնդիրը:

<u>Քայլ 4. Տվյալների հիման վրա այլընտրանքային տեսակետների մշակում</u>

- Հարցրեք աշակերտներին, թե, ըստ իրենց, տվյալ խնդրի վերաբերյալ տարբեր քաղաքական կուսակցություններն ինչ մոտեցումներ և լուծումներ կառաջարկեին: Ինչպիսի՞ն կլինեին յուրաքանչյուր առաջարկի կարճաժամկետ և

երկարաժամկետ հետևանքները: Ի՞նչ այլ գործոնների է անհրաժեշտ անդրադառնալ:

<u>Քայլ 5.Սեփական դիրքորոշումների և դրանք հիմնավորող փաստարկների ներկայացում</u>

Աշակերտներն անդրադարձել են հետևյալ հարցերին.

- ի՞նչ դիրքորոշում ունեմ այս խնդրի վերաբերյալ և ինչո՞ւ,
- որո՞նք են իմ դիրքորոշման հնարավոր կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները,
- որո՞նք են խնդրի լուծման համար անհրաժեշտ քայլերը, և ինչպիսի՞ խոչընդոտներ կան այդ ճանապարհին:

Հարցերի կամ հարցադրումների մեթոդ

Հարցերի կամ հարցադրումների մեթոդը կարևոր միջոց է սովորողների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու և համակարգելու, ստեղծագործական ու քննադատական մտածողությունը զարգացնելու համար:

Ուսուցչի կողմից ներկայացվող հարցերը պետք է լինեն.

- հստակ,
- հակիրճ,
- տեղին ու ժամանակին,
- նպատակաուղղված:

Բացի այդ՝ հարցերը պետք է ունենան տրամաբանական հաջորդականություն, համապատասխանեն սովորողների մակարդակին և մտածելու տեղիք տան:

Մանկավարժության մեջ առանձնացվում են հարցերի հետևյալ տեսակները.

- բաց,
- փակ,
- հուշող,
- ենթատեքստով,
- հետադարձ,
- ուղղորդող:

Բաց են կոչվում այն հարցերը, որոնք չեն ենթադրում միանշանակ պատասխաններ, այլ հնարավորություն են տալիս պատասխանի մեջ ազատ լինել:

Փակ են այն հարցերը, որոնք պահանջում են միանշանակ պատասխաններ՝ «այո՛» կամ «ո՛չ»:

Հուշող հարցերը նպատակ ունեն սովորողներին հանգեցնելու անկնկալվող պատասխանին, օրինակ՝ «Մի՞թե դուք կարծում եք, որ….»:

Ենթատեքստով հարցերը նման են հուշող հարցերին և հետապնդում են ակնկալվող պատասխանին հասնելու նպատակ, օրինակ՝ «Դուք հավանաբար կսխալվեք, եթե պնդեք, որ….»:

Հետադարձ կապի հարցերն ապահովում են սովորողների ներգրավումը զրույցի մեջ, նրանց պատասխանները զարգացնելու կամ հետագա քննարկումը խրախուսելու համար, օրինակ՝ «Դուք ասացիք, որ….»:

Ուղղորդող հարցերը նպատակ ունեն սովորողների ուշադրությունը կենտրոնացնել դիտարկվող նյութի այս կամ այն մասի վրա, օրինակ՝ «Ի՞նչ նոր փաստերի հանդիպեցիք….»:

Այսպիսով, հարցերի մեթոդն ավելի մեծ խնդիր է լուծում, քան փաստերի բուն մտապահումը: Հարցերից ծնվում է երկխոսություն, որի ընթացքում սովորողը ծանոթանում է ընկերների արտահայտած մտքերի բազմազանության հետ, որն իր հերթին ընդլայնում է ողջ դասարանի բառապաշարը, հասկացությունների շրջանակը և մտքերը ստեղծագործաբար արտահայտելու նրանց կարողությունը: Սովորողները հասկանում են, որ հարցերի միջոցով իրենց գիտելիքները դառնում են

արժեքավոր, քանի որ այդ գիտելիքները նրանք կարողանում են նպատակային ձևով համադրել, վերլուծել ու օգտագործել:

ԲԱՆԱՎԵՃ

Կազմակերպումը

Սկիզբը

Բանավեճը հաջող սկսելու համար խիստ կարևոր է, որ.

- սովորողները նախնապես հստակ պատկերացում ունենան բանավեճի նյութի և անցկացման կարգի վերաբերյալ,
- դասարանում ձևավորվի բարենպաստ հոգեբանական մթնոլորտ (դրան մեծապես կարող է նպաստել սովորողների նստելու ձևը. ցանկալի է, որ յուրաքանչյուր մասնակից տեսնի մյուսների դեմքը),
- ուսուցիչը կարողանա ճիշտ կազմակերպել ներածական մասը՝ արդյունավետ և հնարավորինս սպառիչ նախնական բացատրություններ ներկայացնելով բանավեճի նյութի շուրջ:

Բանավեճը սկսելու արդյունավետ տարբերակ է նաև խթանող հարցերի և առաջադրանքների կիրառումը:

Ընթացքը

Բանավեճի անցկացման ընթացքում ուսուցչից պահանջվում է դիտել, կարգավորել, ուղղորդել: Շատ կարևոր է, որ ուսուցիչը զերծ մնա կարգադրող դիտողություններից կամ սեփական տեսակետների պարտադրումից: Նրա հիմնական գործառույթը հարցերի միջոցով բանավեճի ուղղորդումն է: Ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ ընտրել և կիրառել հարցերը, որպեսզի դրանց միջոցով խթանի քննարկումը և սովորողների ինքնուրույն մտածողությունը: Եթե բանավեճի արդյունքում ի հայտ են գալիս ոչ ճիշտ փաստական տվյալներ, եզրահանգումներ, հասկացություններ, ապա ուսուցիչը պետք է միջամտի իր բացատրող, տեղեկացնող

և հակիրճ խոսքով: Եթե սովորողի միտքը հստակ չի ձևակերպված, ուսուցիչը կարող է համառոտ վերաշարադրել այն և հստակեցնել: Կարող է նաև փոխել քննարկման ուղղությունը հետևյալ կերպ. «Ինձ թվում է՝ կարելի է հարցի քննարկումը շարունակել նաև հետևյալ ուղղությամբ…», կամ «Դուք ճիշտ եք, սակայն եկեք դիտարկենք նաև հետևյալը…»:

Ամփոփումը

Բանավեճի ավարտին ուսուցիչը պետք է ամփոփի արդյունքները: Այդ ամփոփումը կարող է հետևյալ տեսքն ունենալ.

- արդեն ասվածի, քննարկվածի ընդհանրացում,
- արված եզրակացությունների վերաձևակերպում,
- հետագա քննարկման կարիք ունեցող հարցերի առաջադրում:

Բանավեճի անցկացման կանոններ

- Յուրաքանչյուր մասնակից պետք է արտահայտվելու հնարավորություն ունենա:
- Պետք է խոսել կարճ, հստակ և պահպանել նախապես սահմանված ժամակարգը:
- Չի կարելի վիրավորել որևէ մեկին:
- Պետք է հարգել յուրաքանչյուրի կարծիքը, եթե նույնիսկ համաձայն չեն դրա հետ:

Ելույթները պետք է կազմակերպված բնույթ կրեն, յուրաքանչյուր մասնակից կարող է խոսել միայն վարողի թույլտվությամբ, կրկնակի ելույթները կարող են լինել հիմնական ելույթներից հետո:

Սովորել հմտությունը

Ընթերցել հետևյալ տեսակետը

Ծխելը կարող է շատ վնասակար ազդեցություն ունենալ մարդու կյանքի համար: Այն առնվազն թանկ սովորություն է: Մեկ տուփ ծխախոտն ամենաքիչը 200 դրամ արժե: Իսկ որ ավելի կարևոր է, ծխելը կարող է բացասաբար ազդել մարդու արտաքինի վրա: Այն դեղնացնում է ատամները և դեմքին կնճիռներ առաջացնում: Ծխելը մեծացնում է քաղցկեղի, սրտային և այլ հիվանդությունների զարգացման հնարավորությունը: Ինչպիսին էլ որ լինի ծխելու պատճառած հաճույքը՝ այն չարժե պատճառած վնասը:

Ի՞նչ կարծիք ունի տեքստի հեղինակը:

Հեղինակը համոզված է, որ ծխելը շատ վնասակար է:

Ո՞րն է առաջին հիմնավորումը:

Առաջին հիմնավորումն այն է, որ ծխելը թանկ է: Սակայն «առնվազն» բառը ցույց է տալիս, որ դա ծխելու ամենավատ հետևանքը չէ:

Ո՞ր ապացույցն է հաստատում առաջին հիմնավորումը:

Հեղինակը նշում է մեկ տուփ ծխախոտի գինը:

Ո՞րն է երկրորդ հիմնավորումը և այն հաստատող ապացույցը:

Մյուս հիմնավորումը ծխախոտի վնասակար ազդեցությունն է մարդու արտաքինի վրա, հաստատող ապացույցը՝ դեղնած ատամները և դեմքի կնճիռները:

Ո՞րն է վերջին հիմնավորումը և այն հաստատող ապացույցը:

«Ամենամեծ վնաս» հասկացությունը ցույց է տալիս, որ կարևորագույն հիմնավորումը ծխախոտի գործած ազդեցությունն է մարդու առողջության վրա:

Ապացույցը ներառում է կյանքի տևողության կրճատումը, հիվանդությունների տեսակները և ծխելու հետևանքով առաջացած մահացությունները:

Ո՞րն է հեղինակի եզրակացությունը:

Հեղինակն ասում է, որ ծխելու հաճույքը նրա պատճառած վնասը չարժե:

Հմտություններ և եզրահանգումներ

Հմտությունն ուսուցանելու քայլեր

1. Պարզե՛ք, թե ինչ գիտեք կամ ենթադրում եք, որ ճիշտ է:
2. Տրամաբանորեն բխող ենթադրություն արե՛ք:
3. Ձեր մտահանգումը ձևակերպե՛ք «Եթե…., ապա….» կառույցով:
4. Օգտագործե՛ք մեկ կամ ավելի հետևություններ եզրակացություն անելու համար:
5. Ստուգե՛ք, թե եզրակացությունը որքանով է տրամաբանական:

Անկյուններ

«Անկյուններն» ուսուցման բանավեճային մեթոդական հնար է, որն ակտիվացնում է սովորողների համագործակցային ուսուցումն ու խմբային աշխատանքը, խթանում կառուցողական փաստարկներ ձևավորելու, հակափաստարկներ բերելու, հիմնավորելու և եզրահանգումներ անելու կարողությունները: «Անկյունները» կարող են դառնալ երկու և ավելի տեսակետներ ծնող. հակասական հարցերի շուրջ ծավալված բանավեճերի կառավարման աշխույժ և ակտիվ միջոց: Դասի ընթացքում այն կարող է հաջորդել տեքստի ընթերցմանը, դասախոսությանը, ֆիլմի դիտմանը կամ պարզապես սովորողներին հետաքրքրող որևէ թեմայի: Այս մեթոդի իմաստն այն է, որ մասնակիցները պետք է ներկայացված խնդրի վերաբերյալ որևէ դիրքորոշում ընդունեն և պաշտպանեն այն: Ընթացքում

մասնակիցները պետք է ուշադիր լսեն միմյանց, քանի որ նրանց հնարավորություն է տրվում դիմացինի փաստարկների համոզիչ և տրամաբանական լինելու դեպքում ճշգրտել իրենց տեսակետները, նույնիսկ փոխել իրենց կարծիքը և պատկերացումները: Սակայն արդյունքում ակնկալվում է, որ յուրաքանչյուր աշակերտ ի վերջո ձևավորում է սեփական դիրքորոշումն ու տեսակետը, ինչի մասին կարող է ինքնուրույն գրավոր փաստարկել:

Ընթացքը

Սովորողների հետաքրքրությունների շրջանակում գտնվող որևէ կարևոր խնդրի, թեմայի շուրջ կազմակերպվում է քննարկում:

- Բաժանվում են անհատական թերթիկներ, որոնց վրա սովորողները շարադրում են իրենց կարծիքը:
- Որոշվում են դասասենյակի անկյունները՝ ըստ հետևյալ կառուցվածքի.

1. «միանգամայն համաձայն եմ»,
2. «համաձայն եմ»,
3. «դեմ եմ»,
4. «կտրականապես դեմ եմ»:

Սակայն հաճախ քննարկումների ժամանակ դժվար է լինում հստակ սահման դնել դիրքորոշումների միջև, ուստի անկյունները կարող են լինել նաև երեքը՝ «կողմ եմ», «դեմ եմ», «չեմ կողմնորոշվում»:

Ուսուցիչը կարող է դիրքորոշումները սահմանել նախօրորք կամ էլ մտքերի տարափի միջոցով սովորողների հետ հանգել մի քանի տեսակետների:

Ուսոցչի հրահանգից հետո.

- ըստ իրենց դիրքորոշման՝ մասնակիցները տեղափոխվում են այն անկյուն, որին համապատասխանում է իրենց թերթիկում նշվածը:
- Նույն անկյունում հանդիպողները ողջունում են իրար և հանդես են գալիս որպես մեկ թիմ և քննարկումներ են անցկացնում: Այս ընթացքում կազմակերպված

մտքերի տարափը նպատակ ունի հավաքագրել բոլոր այն գաղափարները, որոնք միավորում են նրանց:

- Սկզբնական քննարկման ժամանակ նպատակահարմար է, որ թիմի անդամների քանակը 5-ից չանցնի: Սակայն մեթոդի ընթացքն այնպիսին է, որ մի անկյունում համակարծիք մասնակիցների թիվը կարող է ավելանալ կամ պակասել:
- Բոլոր խմբերի փաստարկված կարծիքներն ու համապատասխան հիմնավորումները լսելուց հետո մասնակիցներին առաջարկվում է ճշտել իրենց նախնական վերաբերմունքը, դիրքորոշումը և տեղափոխվել համապատասխան անկյուն:
- Անհրաժեշտ է խրախուսել տեղափոխությունները՝ խնդիրը բազմակողմանի ընկալելու նպատակով:
- Վերջում սովորողներին հանձնարարվում է անհատապես գրավոր ձևակերպել, շարադրել իրենց վերջնական կարծիքը:

Հանրային խնդիրների հստակեցումը և լուծումը քննարկումների միջոցով

Հնարավոր չէ առանց համապատասխան փորձի և կշռադատման խնդիրները խելամիտ և քաղաքակիրթ քննարկելու ունակություններ զարգացնել: Հանրային խնդիրների մոդելը հնարավորություն է տալիս օգնել սովորողներին ոչ միայն զարգացնել ճիշտ հարցեր տալու և համապատասխան տեղեկություններ գտնելու ունակությունը, այլև իրենց հարցերին հետամուտ լինել այնպիսի եղանակներով, որոնք խթանում են ժողովրդավարական արժեքները:

Ցանկացած իրավիճակ կարող է մի շարք ուղղություններով հակասություններ և տարաձայնություններ հարուցել:

Փաստ, բացատրություն, խնդիրներ

Քննարկման ընթացքում փաստային պնդումները կարող են հիմնավորվել տարբեր ձևերով.

- *«Ընդհանուր գիտելիքներ» կամ «Առողջ բանականություն».* սրանք թույլ աղբյուրներ են, քանի որ տարածայնությունը լուծելու համար ոչ մի նոր գործընթաց չեն առաջարկում:
- *Սեփական դիտարկումների ներկայացում.* անհատական դիտարկումները սահմանափակ կիրառում ունեն հանրային խնդիրների ուսումնասիրության մեջ, քանի որ քչերին է հնարավորություն ընձեռվում իրադարձությունների իրական վկա դառնալ: Այդ պատճառով էլ մենք հիմնականում հենվում ենք այլոց վկայությունների վրա՝ հույս ունենալով, որ նրանք կարող են վստահելի տեղեկություններ տալ:
- *Մեջբերում հեղինակավոր աղբյուրից.* հեղինակավոր աղբյուրներից մեջբերումներ կատարելիս մենք պետք է նախ պարզենք աղբյուրի իրական որակը: Արդյոք այն իսկապե՞ս հավաստի է և երաշխավորված: Որոշ դեպքերում փաստացի պնդումները կարող են ստուգվել լրացուցիչ տեղեկությունների միջոցով:
- *Սահմանման խնդիրներ.* սահմանման խնդիրները վերաբերվում են մարդկանց կողմից քննարկման ընթացքում բառերի կամ բառակապակցությունների օգտագործմանը: Սահմանման խնդիրները կարելի է լուծել քննարկման միջոցով, քանի որ դրանք հիմնականում զուտ ձևակերպման հարցեր են, և տվյալ բառի կամ արտահայտության օգտագործումը հիմնավորելու համար քննարկման մասնակիցները կարող են հղում կատարել որևէ հեղինակավոր աղբյուրի:
- *Բարոյական կամ արժեքային խնդիրներ.* սրանք սահմանում են, որ այս կամ այն վարքագիծը լավ է կամ վատ, և որ այդ որակը հիմնվում է որևէ կարևոր համընդհանուր սկզբունքի վրա: Որպես կանոն՝ հանրային քաղաքականության շուրջ եղած հակասությունների մեծ մասը վերաբերվում է հենց բարոյական կամ արժեքային հարցերին: Օրինակ՝ արդյոք կառավարությունը պետք է ֆինանսավորո՞ւմ հատկացնի

համընդհանուր առողջապահության համար (անհատական բարօրությունն ու մարդկային արժանապատվությունն ընդդեմ գործարարության ազատության և անհատական ընտրության):

Այս և նման հարցերում հանրային քաղաքականությունը ցանկացած որոշման դեպքում բախվելու է մարդկանց այս կամ այն խմբի համար կարևոր որևէ արժեքի: Նման հարցերի քննարկման նպատակն է գտնել քաղաքական այլընտրանքներ, որոնք ամենաքիչը կխախտեն կարևոր ու առաջնային ժողովրդավարական արժեքներ:

Արժեքային այս կամ այն պնդումը պաշտպանելու կամ հերքելու համար մասնակիցները կարող են մի շարք ռազմավարություններ կիրառել.

- **Հեղինակություն և հարգանք վայելող աղբյուրի օգտագործում:**
- **Արժեքային դատողություններից բխող հետևանքի կանխատեսում:**

Քաղաքական դիրքորոշումները և արժեքային դատողությունները հաճախ համատեղ են օգտագործվում ցույց տալու համար, որ տվյալ քաղաքականությունը ցանկալի նպատակին կհանգեցնի կամ հետ կպահի անցանկալի հետևանքներից:

- **Զուգահեռներ (անալոգիա):** Բարոյական և արժեքային խնդիրների մասին մեր միտքը հստակեցնելու ամենազորեղ միջոցներից մեկը նշելն է, որ մեկ կամ ավելի դեպքերում խնդիրը կարող էր այլ կերպ լուծվել:

Քննարկման գործընթացը

Դասարանում հանրային խնդիրներ քննարկելու նպատակն է գաղափարները քննադատելու և միմյանց հանդեպ հոգածություն դրսևորելու, հարաբերությունների ուժն օգտագործելու միջոցով կրթել անհատներին և խմբերին: Հանրային խնդիրների ուսումնասիրման մոդելը կիրառելիս ուսուցիչը հանդես է գալիս որպես խթանող՝ օգնելով սովորողներին արդյունավետ քննարկումներ վարել միմյանց հետ: Նման քննարկումներին նախապատրաստելու համար ուսուցիչը պետք է աշխատի

գործնական երկխոսություն խթանող և քննարկման հմտությունները զարգացնող միջավայր ստեղծել:

Դասարանային միջավայր և քննարկում

Հակասական հարցերի ամենաբարդ խնդիրներից է խմբի ներսում միաբանության և ներդաշնակության հասնելը, առանց որոնց հնարավոր չէ արդյունավետ լուծումներ գտնել: Քննարկումը հնարավորություն է ստեղծում հստակեցնել և հետազոտել նյութը և միմյանց տեսակետները: Քննարկումը պետք է դիտարկել որպես հարցադրումների և ուսումնասիրության հնարավորություն և գնահատել, թե ինչպես է խումբը դրա համար համարժեք դաշտ ստեղծում:

Հանրային խնդիրների քննարկումը կարելի է համեմատել թիմային մարզաձևերի հետ: Ֆուտբոլի, բասկետբոլի ժամանակ խաղը չենք դիտարկում առանձին անհատների գործողություններով, այլ որպես խաղացողների միջև հարաբերությունների և փոխազդեցությունների շարք: Յուրաքանչյուր խաղացողից պահանջվում է որոշակի անհատական և կանոնակարգված տեխնիկա, սակայն միասնական ու ներդաշնակ թիմում հաճախ խաղն ինքնաբերաբար է ստացվում: Հետաքրքիր քննարկումը պահանջում է ողջ խմբի եռանդուն և անկաշկանդ մասնակցությունը: Ավելին, ուսուցիչներին խորհուրդ է տրվում հանրային խնդիրների քննարկման ժամանակ սովորողների համար օրինակ ծառայել՝ ուշադիր լսելով խոսողին, հարգանք, անհրաժեշտության դեպքում նաև սեփական տեսակետը փոխելու պատրաստակամություն դրսևորելով: Ի դեպ՝ դիրքորոշման նման փոփոխությունը պետք է կատարվի թափանցիկ և հասկանալի ձևով:

Քննարկման հմտությունները

Հանրային խնդիրների քննարկումներին արդյունավետ մասնակցելու համար անհրաժեշտ են տարբեր հմտություններ, որոնցից շատերի ձեռքբերումը պահանջում է վերացնել առօրյա խոսակցությունների ընթացքում արմատացած անարդյունավետ

սովորույթները: Այլ խոսքով՝ սովորողները պետք է յուրացնեն կարգապահ քննարկման տեխնիկաները: Դրանք ներառում են.

- ուշադրություն ուրիշների ասածների նկատմամբ,
- տարաձայնության առկա խնդրի հստակեցում,
- օրակարգի ու ընթացակարգի մշակում և կիրառում,
- քննարկման ընթացքում անցումների և փոփոխությունների նշում,
- հնարավոր խոչընդոտների վերացում,
- անդրադարձ քննարկման գործընթացին և կշռադատում:

Խնդրի հստակեցում

Հաճախ քննարկման հենց սկզբից մասնակիցները կենտրոնանում են խնդրի որևէ կոնկրետ կողմի վրա: Բարդ իրավիճակ քննարկելիս միանգամից կարծիքների հեղեղ է սկսվում: Կարգավորված քննարկում անցկացնելու համար պետք է հստակեցնել, թե ինչ կարծիքներ են արտահայտվել տարբեր խնդիրների կամ կոնկրետ խնդրի տարբեր կողմերի վերաբերյալ: Անհրաժեշտ է հստակեցնել նաև, թե որ կետերն են ընդհանուր համաձայնության արժանացել, և որոնք են տարաձայնություններ հարուցել: Այս քայլերը մասնակիցներին հնարավորություն են տալիս կենտրոնանալ խնդրի սահմանափակ կողմերի կամ սահմանափակ խնդիրների վրա և դրանք հետևողականորեն քննարկել:

Օրակարգի և ընթացակարգի մշակում

Օրակարգը խմբի անդամների ընդհանուր համաձայնությամբ քննարկման դրված խնդիրների ցանկն է: Երբ խումբը սկսում է որևէ բարդ իրավիճակ քննարկել, տարբեր մարդիկ տարբեր խնդիրներ են տեսնում: Որպես կանոն, յուրաքանչյուրը խոսում է այն խնդրի մասին, որն իր կարծիքով ամենակարևորն է և չի փորձում զգայուն ուշադրություն դրսևորել այլոց համար կարևոր խնդիրների նկատմամբ:

Այս պրոբլեմը լուծելու տարբերակներից մեկը կարևոր թվացող բոլոր խնդիրների ցանկ կազմելն է: Այդ դեպքում մասնակիցները կարող են որոշել, թե ցանկում ներառված խնդիրներից որոնք են ուզում քննարկել և ինչ հաջորդականությամբ:

Քննարկման ժամանակ կարևոր է նաև խնդիրների շարունակականությունն ապահովել: Չափազանց արագ մի խնդրից մյուսին անցնելը կխոչնդոտի ծագած տարաձայնությունները հստակեցնելուն և հաղթահարելուն: Խնդիրը շարունակաբար և հետևողականորեն քննարկել նշանակում է բավարար ժամանակ հատկացնել բոլոր տարաձայնությունները քննարկելու և լուծելու համար:

Հստակ անցումներ կատարել

Քննարկման ընթացքում լինում են պահեր, երբ անհրաժեշտ է թողնել մի խնդիրը և անցնել մյուսին: Մասնակիցների բանավեճը կարող է բերել այնպիսի փակուղու, որը համաձայնության ոչ մի հնարավորություն չի թողնում: Այդ դեպքում նրանք կարող են «համաձայնության գալ տվյալ խնդրի շուրջ համաձայնության չգալու մասին» և անցնել հաջորդ խնդրին: Երբեմն հայտնվում է մի նոր խնդիր, առանց որի քննարկման հնարավոր չէ տվյալ պահին քննարկվող խնդիրն արդյունավետ լուծել: Այդ դեպքում նա, ով որոշում է փոխել քննարկման խնդիրը, պետք է հստակ ասի այդ մասին՝ բացատրելով, որ նոր խնդրին անցնելը կխթանի քննարկման արդյունավետությունը: Անցում կատարելիս օգտակար կլինի նախ ամփոփել նախորդ խնդրի շուրջ մասնակիցների տարաձայնությունները:

Հնարավոր խոչընդոտներ

Քննարկումն արդյունավետ դարձնելու համար պետք է բացահայտել նաև հնարավոր խոչընդոտները և դրանք վերացնելու ռազմավարություններ մշակել: Նման խոչընդոտների օրինակներ կարող են լինել այլ կարծիքներ չլսելը, խնդիրը հետևողականորեն չքննարկելը, մտքերի կրկնությունները, հարձակողականությունը

և ամեն գնով հաղթելու ձգտումը: Խոչընդոտ կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ մասնակիցներին չի հետաքրքրում տվյալ իրադրությունը կամ ընդհակառակը՝ այնքան շահագրգիռ են թեմայով, որ չեն կարող սթափ մոտենալ հարցին, ուստի քննարկման խնդիրներն ընտրելիս անհրաժեշտ է շրջահայաց լինել:

Անդրադարձ քննարկմանը, կշռադատում

Արդյունավետ քննարկման հմտություններ զարգացնելու ամենահավաստի եղանակներից մեկը սովորողներին պարբերաբար անդրադարձ կատարելու և կշռադատման մղելն է: Քննարկման ընթացքում խումբը կարող է դադար տալ և հարցնել. «Ի՞նչ է հիմա տեղի ունենում»:

Ներկայացված հարցերը կարող են օգնել պարզելու, քննարկումն արդյունավե՞տ է ընթանում, թե՞ շարժվում է շրջագծով:

- Ի՞նչ խնդիրներ են քննարկվել:
- Ինչպիսի՞ դիրքորոշումներ են ներկայացվել և ու՞մ կողմից:
- Արդյո՞ք հաջողվել է համաձայնության գալ խնդիրներից որևէ մեկի կամ մի քանիսի շուրջ: Որո՞նք են այդ խնդիրները: Որո՞նք են համաձայնության գալու պատճառները:
- Ո՞ր գործոններն են օգնել քննարկումն առաջ տանել:
- Ի՞նչն է խոչընդոտել քննարկմանը կամ այն դարձրել անարդյունավետ:
- Ի՞նչ խնդիրներ դեռ պետք է քննարկվեն և ինչո՞ւ:

Չնայած նման հարցերը կօգնեն սովորողներին կանոնավորել քննարկումը և բարելավել իրենց համապատասխան հմտությունները, սրանք ինքնին բավական չեն քննարկման արդյունավետության գնահատման համար:

Քննարկման որակական գնահատման համար առաջարկում ենք կիրառել հետևյալ չափանիշը, եթե քննարկումն ավելի բարդ ու թեժ է դարձել, քան սկզբում էր, ուրեմն արդյունավետ ընթացք է ունեցել:

Սոկրատեսյան բանավեճ

Նպատակը

Սոկրատեսյան բանավեճի մեթոդը կապված է Հին Հունաստանի հայտնի փիլիսոփա Սոկրատեսի անվան հետ: Ըստ նրա մոտ ուսանող Պլատոնի վկայության՝ Սոկրատեսը խրախուսում էր հարցերի միջոցով խնդիրների էությունը հասկանալու և ճշմարտության հասնելու մոտեցումը: Սոկրատեսյան բանավեճն արժեքավոր մեթոդ է մի քանի առումներով: Այն խրախուսում է սովորողների ուսումը և մասնակցությունը: Բանավեճը զարգացնում է հարցեր ձևակերպելու և սովորողների մտածողության ընթացքին հետևելու ուսուցանողի կարողությունները: Վերջապես, պատասխանելով ուսուցանողի հարցերին՝ սովորողները պարբերաբար վերանայում են իրենց դիրքորոշումները, զարգացնում մտածողության որակը:

Ե՞րբ օգտագործել

Սոկրատեսյան բանավեճը նպատակահարմար է օգտագործել այն դեպքերում, երբ նպատակ ունենք զարգացնել սովորողների ընկալունակությունը, մտածողության որակը: Սոկրատեսյան բանավեճի ժամանակ փաստական հարցեր չեն տրվում: Օրինակ՝ «Նկարագրե՛ք աթենական պետության կառուցվածքը» տիպի հարցերն անընդունելի են սոկրատեսյան բանավեճի ժամանակ: Փոխարենը՝ «Ճի՞շտ վարվեց Սոկրատեսը՝ խմելով թույնը» բովանդակությամբ հարցը միանգամայն համապատասխան է սոկրատեսյան բանավեճի պահանջներին:

Սոկրատեսյան բանավեճը նպատակահարմար է օգտագործել նաև հակասական, միակ ճիշտ պատասխան չունեցող խնդիրների պարագայում:

Սոկրատեսյան բանավեճի ընթացքը

Բանավեճի ընթացքում սովորողները պետք է նստեն շրջանաձև, որպեսզի միմյանց տեսնեն: Սոկրատեսյան բանավեճն ուսուցանողից պահանջում է

նախապատրաստական լուրջ աշխատանք: Նախ՝ ուսուցանողը պետք է ընտրի բանավեճի թեման և մտածի, թե նախնական ինչպիսի նյութ է տալու սովորողներին: Որպես նախնական նյութ կարող են ծառայել դասախոսությունը, սկզբնաղբյուրները, դասագրքերը, հոդվածները: Ապա՝ ուսուցանողը պետք է մտածի սովորողներին տրվելիք առաջին հարցի մասին: Այդ հարցը պետք է լինի հետաքրքրաշարժ, որպեսզի գրավի սովորողների ուշադրությունը, և ընդհանրական, որպեսզի ընդգրկի թեման: Առաջին հարցն իր բնույթով պետք է լինի այնպիսին, որ մի կողմից՝ հետաքրքրի սովորողներին, մյուս կողմից՝ նրանք չունենան հարցի վերջնական պատասխաններ: Սոկրատեսյան բանավեճի ժամանակ առաջին հարցի նշանակությունը մեծ է, ուստի ճիշտ կլինի, եթե ուսուցանողը նախօրոք կազմի մի քանի հարցեր, որովհետև հնարավոր է, որ առաջին հարցը բանավեճ չառաջացնի:

Համակարգված հարցերով բանավեճն ուղղորդելն ուսուցանողի հիմնական խնդիրներից մեկն է: Ընդ որում՝ դասավանդողը հարցերով պետք է խորացնի սովորողների տեսակետները: Ի դեպ՝ բանավեճի ընթացքում սովորողները ևս կարող են հարցեր տալ: Բանավեճի որոշակի փուլում ուսուցանողը կարող է ընդհատել այն և անցնել գնահատման փուլին:

Ինչպե՞ս գնահատել սոկրատեսյան բանավեճը

Սոկրատեսյան բանավեճը, ինչպես նաև մյուս մեթոդները, պետք է գնահատել՝ ըստ դրված նպատակի: Այս բանավեճի ընթացքում սովորաբար գնահատվում են սովորողների՝ նյութը հասկանալու ունակությունը, սեփական տեսակետը տրամաբանորեն և օրինակներով հիմնավորելու կարողությունը, սովորածի շուրջ ինքնուրույն խորհրդածելը: Որպես գնահատման գործիքներ կարելի է օգտագործել հարցաշարեր, գնահատման սանդղակներ կամ սյունակաշարեր (ռուբրիկներ): Եթե սոկրատեսյան բանավեճը պարբերաբար է անցկացվում, ապա ուսուցանողը կարող է օգտագործել նաև խորհրդածությունների մատյան կամ թղթապանակ: Այդ մատյանում սովորողը պետք է գրանցի իր տպավորությունները, իր ու

դասընկերների արձանագրած արդյունքները: Նմանատիպ մատյանում գրանցումներ կատարելուն կարող են օգտակար լինել ինքնագնահատման ստորև տրվող հարցերը:

Սոկրատեսյան բանավեճի ինքնագնահատման ձև

1. Արդյոք քննարկվող նյութը Ձեզ հասկանալի՞ էր:
2. Արտահայտե՛ք Ձեր տեսակետը քննարկվող խնդրի մասին՝ մեջբերելով բանավեճի ընթացքում հնչած երեք փաստարկներ:
3. Բանավեճի ընթացքում Դուք որևէ տեսակետ արտահայտե՞լ կամ հիմնավորե՞լ եք: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
4. Բանավեճի ընթացքում Դուք ուշադրություն դարձնո՞ւմ էիք Ձեր մտքերի ընթացքին: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
5. Ինչպե՞ս կարող էր լսարանը իրեն ավելի լավ դրսևորել նման բանավեճի ժամանակ:

Ինքնագնահատման այս ձևն օգնում է բանավեճի ժամանակ սովորողների մտածողության ընթացքը գնահատելու հարցում:

Սոկրատեսյան բանավեճը կարելի է գնահատել նաև ռուբրիկով, որի մեկ օրինակ ներկայացնում ենք ստորև:

Գնահատման սանդղակ կամ սյունակաշար (ռուբրիկ)

Անբավարար

Սովորողը չի արտահայտել համապատասխան գիտելիքներ, չի փաստարկել կամ չի առաջարկել ոչ մի տեսակետ:

Նվազագույն

Սովորողը գիտելիքներ է արտահայտել մեկ ուրիշի առաջադրած փաստարկի մասին: Սովորողի տեսակետն անորոշ է:

Համապատասխան

Սովորողը հիմնավորված գիտելիքներ է արտահայտել բանավեճի ընթացքում արտահայտված թեմաների շուրջ, սեփական տեսակետ է հայտնել, որը բացատրել է, հիմնավորել ու բերել փաստեր:

Արդյունավետ

Սովորողը հիմնավորված գիտելիքներ է արտահայտել բանավեճի ընթացքում արտահայտված թեմաների շուրջ: Առաջադրել ու հետևողականորեն պաշտպանել է առնվազն մեկ դրույթ և խորհրդածել է իր մտքերի շուրջ:

Օրինակելի

Սովորողը հիմնավորված գիտելիքներ է արտահայտել բանավեճի ընթացքում արտահայտված թեմաների շուրջ: Այդ թեմաների վերաբերյալ արտահայտել է սեփական տեսակետներ, որոնք բացատրել է, հիմնավորել ու փաստեր է բերել: Ապա սովորողը հրապարակայնորեն խորհրդածել է իր մտքերի շուրջ:

Սոկրատեսյան բանավեճի առավելություններն ու սահմանափակումները

Այս մեթոդը խրախուսում է ակտիվ ուսուցում՝ սովորողներին ներգրավելով ուսումնական գործընթացին: Սոկրատեսյան մեթոդը հիմնվում է ոչ թե պարզունակ, այլ խորքային հարցերի վրա: Ըստ մասնագետների՝ նմանատիպ հարցերը սովորողների մոտ հետաքրքրություն են առաջացնում: Այս մեթոդի միջոցով սովորողները կենտրոնանում են ոչ միայն բովանդակության, այլև իրենց

մտածողության ընթացքի վրա՝ զարգացնելով իմացական հմտություններ:

Առավելություններից զատ՝ սոկրատեսյան բանավեճն ունի նաև առանձնահատկություններ, որոնց ոչ ճիշտ օգտագործման պարագայում հնարավոր են ձախողումներ: Այս բանավեճը մասնավորապես կարող է ընթանալ անկանխատեսելի ուղղությամբ, ինչը նշանակում է, որ ուսուցանողը պետք է դասի ընթացքում ձևավորի համապատասխան հարցեր: Փաստորեն կարճ ժամանակում ուսուցանողը պետք է կարողանա լսել սովորողներին, ձևակերպել համապատասխան հարցեր ու կառավարել դասի ընթացքը:

Օգտագործված գրականություն

1. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա.. Շարխաթունյան Հ., Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2004:
2. Թադևոսյան Մ., Խաչատրյան Ս., Սողոմոնյան Վ., Հովհաննիսյան Գ., Մեյրոյան Ն., Մաթևոսյան Մ., Շմիտ Բ., Մոդել Դ., «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում» կրթական ռեսուրսներ, 2017:
3. Հարությունյան Կ., Խաչատրյան Հ., Կլիմայի փոփոխություն, Ինչպես իրականացնել ուսումնական նախագծային աշխատանքներ, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2022: https://www.unicef.org/armenia/media/13261/file/%D4%BF%D5%AC%D5%AB%D5.pdf/
4. Ստեփանյան Ռ., Երեխաների առցանց անվտանգության ապահովումը, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2019:
5. Ստեփանյան Ռ., Տեղեկավական տեխնոլոգիաների կրթական գործիքներ, Երևան, «Մարի» հրատ., 2019:
6. «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամ: https://kznakgnahatum.blogspot.com/

https://kznakbnagavar.blogspot.com/2022/10/blogpost_28.html?fbclid=IwAR3IVf0WQib_

7. Հանրակրթության պետական չափորոշիչ (ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում:

https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788.

8. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի 30-Լ հրաման:
9. Մեթոդական ձեռնարկ «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների համար, Կոնրադ Ադենաուր Հիմնադրամ, Երևան, 2020:
10. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը դասապրոցեսում, Ձեռնարկ հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար, «Ինտերակտիվ կրթության զարգացման հիմնադրամ» և «Փի-էՅՉ Ինթերնեշնլ», Երևան, 2022:
11. «Քաղաքացի նախագիծ» համայնքային հիմնախնդիրների հետազոտման նախագիծ, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ», Երևան, 2014:
12. Նախագծային ուսուցման ձեռնարկ «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների համար, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ», 2022:
13. Մեդիագիտություն, Ձեռնարկ ուսուցիչների համար, https://media.am/hy/lab/2022/08/29/33843/
14. BIE Book Excerpt: The Roots of Gold Standard PBL in Kilpatrick and Dewey

https://my.pblworks.org/resource/blog/bie_book_excerpt_the_roots_of_gold_standard_pbl_in_kilpatrick_and_dewey

15. Bloom's Taxonomy

https://cft.vanderbilt.edu/guides-sub-pages/blooms-taxono my/

16. Crosscutting Concepts in the Next Generation Science Standards

https://nap.nationalacademies.org/read/18290/chapter/13

17. Educational Equity & PBL.

https://www.pblworks.org/educational-equity

18. Gold Standard PBL: Essential Project Design Elements

https://www.pblworks.org/what-is-pbl/gold-standard-project-design

19. Next Generation Science Standards – NGSS
https://www.cde.ca.gov/pd/ca/sc/ngssfaq.asp#e2
20. Performance Based Assessment
https://www.projectappleseed.org/assessment
21. Positive Youth Development (PYD) Framework
https://www.youthpower.org/positive-youth-development-pyd-framework
22. Positive Youth Development Illustrative Indicators.
https://www.youthpower.org/sites/default/files/YouthPower/resources/PYD%20Indicators%20Brief%20final%203.17.pdf
23. Rubric for Assessment of the Agrumemntative Essay
https://pier.macmillan.yale.edu/sites/default/files/files/Argumentative%20essay%20rubric.pdf
24. Reflective Essay Rubric, USC Center for Execellence and Teaching
https://cet.usc.edu/teaching-resources/reflective-essay-rubric/?fbclid=IwAR0gMPAgkQ3QmyOzdV4kap4nctRQtQmV15kTTQAAHLAey9x-tu1edtLGWSs.
25. John Larmer, John Mergendoller, Suzie Boss, "Setting the Standard for Project Based Learning", Alexandia, VA, USA.
26. The Cambidge Handbook of Learning Sciences, Blumenfeld, Kempler, & Krajcik, 2006.
27. The Purpose of Building a Portfolio Assessment.
https://www.thoughtco.com/the-purpose-of-building-a-portfolio-assessment-3194653
28. https://www.battelleforkids.org/networks/p21/frameworks-resources
29. https://www.youtube.com/watch?v=uH6x9t4nh7A&list=PLtOk2dngXRWuUqlXkwguUxejxMU4aPy6E&index=15

ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԱՅԿՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ,
ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ, ԱՐԱՔՍ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ,
ՏԱՐՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հրատարաչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/8
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 12 տպ. մամուլ

«Զանգակ» հրատարակչություն
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak